# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 19 (1469) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 29, 2010
VOLUME 30, NO. 19 (1469) SATURDAY, MAY 29, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԹՈՒՐՔԻԱՆ ՎԱՏՆԵԼ Է ԻՐ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ՊԱՇԱՐԸ»

*Հայաստանի գործող Նախագահ Սերժ Սարգսեան Պրիւքսէլ կատարած իր այցելութեան ընթացքին Երեքշաբթի, Մայիս 25-ին հանդիպում ունեցած է ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղար Անտըրս Ֆոք Ռասմըսընի հետ ու այդ առթիւ յայտարարած է որ, նախապայմաններ թելադրելով եւ համաձայնուած ժամկէտները խախտելով՝ Թուրքիա վատնած է իր՝ որպէս բանակցային գործընկերոջ վստահութեան պաշարը:*

*Նախագահի մամլոյ գրասենեակի փոխանցած տեղեկութիւններուն համաձայն, հանդիպման ժամանակ քննարկուած են Հայաստան - ՆԱԹՕ համագործակցութեանն առնչուող եւ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող այլ հարցեր:*

*Կողմերը շեշտած են, որ վերջին տասնամեակին զգալի յառաջընթաց արձանագրուած է Հայաստան - ՆԱԹՕ յարաբերութիւններու գծով՝ ապահովելով ակտիւ երկխօսութիւն ռազմաքաղաքական ոլորտէն ներս: Յատկապէս յաջողած նկատուած է Անհատական գործընկերութեան գործողութիւններու ծրագրի իրականացումը, Հայաստանի մէջ ՆԱԹՕ-ի զօրավարժութիւններու կատարումը եւ Հայաստանի ընդլայնուող մասնակցութիւնը ՆԱԹՕ-ի միջազգային խաղաղապահ գործողութիւններուն:*

*Սերժ Սարգսեանն ըսած է, որ Հայաստան հետեւողականօրէն կը շարունակէ գործակցութիւնը ՆԱԹՕ-ի դաշնակիցներու եւ գործընկեր պետութիւններու հետ համագործակցութեան օրակարգին վրայ գտնուող բնագաւառներէն ներս, ինչպիսին են միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարը, սահմաններու պաշտպանութիւնը ու*

Շար.ը էջ 4

## ԵՒՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՈՉ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԲԱՆԱՁԵՒ

*Մայիս 20-ին Եւրախորհուրդը քուէարկութեամբ վաւերացուց փաստաթուղթ մը յստակացնելով Հարաւային Կովկասէն ներս Եւրամիութեան որդեգրած ռազմավարութեան հիմնական ուղղութիւնները, միաժամանակ պահանջելով հայկական զօրքերու հեռացումը «Ատրպէյճանի գրաւեալ տարածքներէն»:*

*Բանաձեւի հեղինակ՝ պուլկարացի պատգամաւոր Եւգենի Կիրիլով նիստի ընթացքին յայտարարեց. - «Հարաւային Կովկասը Եւրամիութեան համար զուտ սահմանակից տարածաշրջան չէ: Միութեան համար ան ռազմավարական նշանակութիւն ունի թէ՛ տնտեսական, թէ՛ քաղաքական եւ թէ՛ անվտանգութեան նկատառումներէ մեկնելով»:*

*Եւրամիութեան ընդարձակման գծով յանձնակատար Շտեֆան Ֆիւլէ հարաւկովկասեան երեք պետութիւններու ղեկավարներուն զգուշացուց, որ համագործակցութիւնը առանց բարեփոխումներու անկարելի է. - «Եւրամիութեան հետ մերձեցման պարտաւորութիւնը, որ ստանձնած են մեր հարաւկովկասեան գործընկերները, պէտք է յանգեցնէ քաղաքական կայունութեան ամրապնդման, ժողովրդավարութեան ու շուկայական տնտեսութեան ուղղութեամբ հետագայ յառաջընթացին: Մենք կոչ կ՚ընենք Հայաստանին, Ատրպէյճանին ու Վրաստանին առաջ շարժելու ժողովրդավարութեան եւ բազմակարծութեան վրայ հիմնուած ժամանակակից հասարակութեան ստեղծման ու դրացիներու հետ խաղաղութեան հաստատման ուղղութեամբ»:*

*Ընդունուած փաստաթուղթին մէջ բաւական մանրամասն կերպով անդրադարձ կայ նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման շուրջ:*

*Եւրոպական խորհրդարանը դատապարտելէ ետք Ղարաբաղեան խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու գաղափարը, կը պահանջէ հայկական ուժերը դուրս բերել ատրպէյճանական «գրաւեալ» տարածքներէն, թոյլ տալով տեղահանուածներուն վերադառնալ իրենց օճախները: Եւրախորհրդարանը կը պնդէ, որ հայկական ուժերը պէտք է արագօրէն լքեն Լեռնային Ղարաբաղին յարող բոլոր «գրաւուած» ատրպէյճանկան տարածքները»:*

*Այս հանգրուանին եւրոպացի խորհրդարանականները ղարաբաղեան հարցի լուծումը կը տեսնեն Լեռնային Ղարաբաղին միջանկեալ կարգավիճակ շնորհելու մէջ, մինչեւ վերջնական կարգավիճակի յստակեցումը:*

*Եւրախորհրդարանը կ՚առաջարկէ Եւրամիութեան գործադիր մարմիններուն, դիտորդական մեծաքանակ առաքելութիւն ուղարկել տարածաշրջան, որ պէտք է նպաստէ միջազգային խաղաղարար ուժերու ձեւաւորման:*

*Եւրախորհուրդի բանաձեւին մէջ կայ նաեւ անդրադարձ հայ-թրքական յարաբերութիւններու ներկայ վիճակին. - «Եւրոպական խորհրդարանը կողմերուն կոչ կ՚ընէ օգտուելու յարաբերութիւնները բարելաւելու նպատակով ստեղծուած հնարաւորութենէն եւ խելամիտ ժամկէտներու մէջ, առանց նախապայմաններու վաւերացնել արձանագրութիւնները», ըսուած է թիւ 2216 բանաձեւին մէջ:*

## ՂԱՐԱԲԱՂԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՅԱՂԹԱԾ Է «ԱԶԱՏ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ



*Լեռնային Ղարաբաղի մէջ կիրակի, Մայիս 23-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն, յաղթած է վարչապետ Արա Յարութիւնեանի «Ազատ հայրենիք» կուսակցութիւնը:*

*6 տոկոսի նուազագոյն արգելքը յաղթահարած են նաեւ խորհրդարանի ներկայիս խօսնակ Աշոտ Ղուլեանի գլխաւորած Արցախի Ժողովրդավարական կուսակցութիւնը եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:*

*Խորհրդարանի 33 մանդատներուն համար ընտրութիւնները կատարուած են համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով:*

*Երկուշաբթի, Մայիս 24-ին Լեռնային Ղարաբաղի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի ամփոփած նախնական արդիւնքներով, առաջին տեղը գրաւած է «Ազատ Հայրենիք»-ը, որ ստացած է 29 հազար 252 ձայն, կամ քուէարկութեան մասնակցած ընտրողներու 46.4 տոկոսը, 18 հազար ձայնով (28.6 տոկոս) երկրորդ տեղի վրայ է Արցախի Ժողովրդավարական կուսակցութիւնը, եւ 12 հազար 728 (20.2 տոկոս) քուէներով երրորդ տեղը գրաւած է Դաշնակցութիւնը: Կոմկուսը ստացած է 3 հազար 54, կամ քուէարկութեան մասնակիցներու 4.8 տոկոսի ձայները:*

*Յայտնենք որ, բացի Դաշնակցութենէն եւ Կոմկուսէն հայաստանեան այլ կուսակցութիւններ գործունէութիւն չեն ծաւալէր Ղարաբաղի մէջ, նկատի առնելով հոն տիրող յատուկ կացութիւնը:*

*«Մայիսի 23-ին Լեռնային Ղարաբաղում անցկացուած խորհրդարանական ընտրութիւնները վկայում են Արցախում ժողովրդավարութեան, օրէնքի գերակայութեան ամրապնդման հանդէպ իշխանութիւնների եւ ժողովրդի յանձնառութեան մասին», - Երկուշաբթի օր յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան: «Միջազգային հանրութիւնն առաւել քան պէտք է շահագրգռուած լինի Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի*

Շար.ը էջ 4

## ՄԱՀԱԶԴ

Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութիւնը խոր ցաւով կը գուժէ Կուսակցութեան հաւատաւոր ընկերներէն, Կեդրոնական Վարչութեան երկարամեայ անդամ՝

ՅԱԿՈԲ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 24 Մայիս 2010-ին :

## ՈՉ ԵՒՍ Է ՅԱԿՈԲ ՊԵՐՊԵՐԵԱՆ

*Խոր ցաւով իմացանք որ Պէյրութի մէջ իր մահկանացուն կնքած է Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներէն հաւատաւոր եւ գաղափարանուէր կուսակցական Յակոբ Պէրպէրեան:*

*Այս տխուր առիթով մեր խորազգաց վշտակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի այրիին, զաւակներուն, համայն ընտանեկան պարագաներուն եւ Լիբանանի շրջանի մեր ընկերներուն:*

**Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին**

# ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՆ ՀԵՏ
# ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

**Գ. ԽՈՏԱՆԵԱՆ**

*Եւրոպայի Խորհրդարանը անցեալ շաբթուայ ընթացքին իր ընդունած մէկ բանաձեւով Հայաստանի դիւանագիտութիւնը արձանագրեց իր հերթական ձախողութիւնը:*

*Վերջին տարիներուն Եւրոպական կառոյցները Հայաստանի վերաբերեալ բազմաթիւ բանաձեւեր որդեգրած են, որոնք կը վերաբերին երկրէն ներս անհրաժեշտ եղող բարեփոխումներուն, Մարտ 1-ի դէպքերուն, քաղաքական բանտարկեալներուն եւ ներքին այլ հարցերու: Այդ պահանջները ընդհանրապէս անտեսուած կը մնան Հայաստանի իշխանութիւններուն կողմէ եւ շատ փոքր քայլեր կը կատարուին երկրէն ներս տիրող քաղաքական իրավիճակը մեղմելու ուղղութեամբ, ինչ որ իր կարգին իր ազդեցութիւնը կ՚ունենայ Հայ դիւանագիտութեան գործունէութեան վրայ՝ արտաքին քաղաքականութեան ծիրէն ներս:*

*Եւրոպական Խորհրդարանի հաստատած թիւ 2216 բանաձեւը թէեւ միայն Հայաստանի հարցերուն յատուկ փաստաթուղթ մը չէ եւ կը վերաբերի Եւրամիութեան ու Հարաւային Կովկասի երեք հանրապետութիւններուն միջեւ յարաբերութիւններու հետագայ զարգացման, սակայն Լեռնային Ղարաբաղի հարցով կը պարունակէ այնպիսի ձեւակերպումներ, որոնց հետեւանքները ի յայտ կրնան գալ ժամանակի ընթացքին:*

*Փաստաթուղթը կը շեշտէ, որ Հարաւային Կովկասը Եւրամիութեան համար զուտ սահմանակից տարածաշրջան չէ եւ ունի ռազմավարական նշանակութիւն՝ տնտեսական, քաղաքական եւ ապահովութեան նկատառումներով: Այսպիսով, Եւրոպացիք կու գան շեշտելու, որ այսուհետեւ խաղի կանոնները փոխուած են Հայաստանին, Ատրպէյճանին եւ Վրաստանին տրուած մեղրալուսնի ժամանակը վերջացած է եւ այդ երեք երկիրները պէտք է գործեն այնպէս, որ չվտանգեն ընդհանուր Եւրոպայի շահերուն:*

*Այս փաստաթուղթով Եւրոպական երկիրները երեք հանրապետութիւններէն կը պահանջեն քաղաքական կայունութիւն, ժողովրդավարութիւն եւ շուկայական տնտեսութիւն, բաներ, որոնք միայն ձեւականօրէն գոյութիւն ունին այդ երկրներէն ներս:*

*Անցեալին Հայաստան կը զատորոշուէր միւս երկուքէն եւ կը նկատուէր «ժողովրդավարութեան կղզեակ» տարածաշրջանէն ներս: Ժամանակ մը նոյն կարգավիճակը ունէր Վրաստանը, սակայն հոն եւս իրավիճակը փոխուած է ու Սահակաշվիլլին եւս սկսած է դասուիլ որպէս Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն նմանող քաղաքական գործիչ մը:*

*Հայութեան համար Փաստաթուղթի ամենէն մտահոգիչ մասը կը հանդիսանայ Ղարաբաղեան հարցի լուծման շուրջ Եւրոպական խորհրդարանի ունեցած պատկերացումները, ուր ամբողջութեամբ անտեսուած է Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը ու նախապատուութիւնը տրուած է Ատրպէյճանցի գաղթականներուն, որոնք, ըստ ընդունուած բանաձեւի, պէտք է վերադառնան իրենց տուները ու այդ ընելու համար հայկական զօրքերը պէտք է հեռանան «Ատրպէյճանի գրաւեալ տարածքներէն»:*

*Բնականաբար, այս վերջին հարցը խիստ դժգոհութիւն յառաջացուց Հայաստանի քաղաքական շրջանակներուն մօտ: Արտաքին գործոց Նախարարութիւնը, իր յայտարարութիւններով այն տպաւորութիւնը ձգեց, որ ինք եւս անակնկալի եկած է ընդունուած բանաձեւով եւ զայն արժեզրկելու նպատակով կատարուած փորձերը այնքան ալ համոզիչ չէին, նոյնիսկ ներքին սպառումի առումով: Իշխանամէտ կուսակցութիւններու ներկայացուցիչները մեղադրեցին զեկոյցը պատրաստող պուլկարացի խորհրդարանականին, ըսելով թէ ան կը գտնուի ատրպէյճանցիներու եւ Թուրքերու ազդեցութեան տակ: Սակայն, իրողութիւնը կը մնայ այն, ու անկախ թէ ո՞վ պատրաստած է բանաձեւը, միւս երկիրներու ներկայացուցիչները ընդունած են, իսկ հայկական դիւանագիտութիւնը չէ կարողացած կանխել զայն եւ կամ աւելի հաւասարակշռուած բանաձեւ մը ընդունիլ տալ:*

*Եւրոպայի Խորհրդարանի բանաձեւին մէջ կայ նաեւ այլ բաժին մը, ուր հայ-թրքական յարաբերութիւններուն ակնարկելով կ՚ըսուի՝ «Մինսկի խումբի հովանաւորութեամբ ընթացող բանակցութիւնները ու հայ-թրքական հաշտեցումը իրարմէ անջատ գործընթացներ են»: Սակայն այս հաստատումին անմիջապէս կը յաջորդէ այն միտքը, որ երկու գործընթացներէն մէկուն մէջ արձանագրուած յառաջընթացը, կրնայ լուրջ դրական հետեւանքներ ունենալ ամբողջ տարածաշրջանի համար: Այսպիսով կարծէք թէ որդեգրուած է Թրքական այն տեսակէտը, թէ ղարաբաղեան հարցի լուծումով պայմանաւորուած է հայ-թրքական սահմանի բացումը եւ մնացեալ հարցերը:*

*Եւրոպայի Խորհրդարանի կողմէ վաւերացուած ոչ հայանպաստ այս փաստաթուղթը ու նաեւ Կիրակի օր, Լեռնային Ղարաբաղի խորհրդարանական ընտրութիւններու օրինականութիւնը ժխտող միջազգային կազմակերպութիւններու եւ շարք մը երկիրներու յայտարարութիւնները, անգամ մը եւս ցոյց կու տան Թրքական ազդեցութեան հզօրացումը կովկասեան տարածաշրջանի հարցերուն մէջ: Թուրքիա ի վիճակի է արդէն, իր եւ իր դաշնակից Ատրպէյճանի տեսակէտները ընդունելի դարձնելու եւրոպական այլ երկիրներու մօտ: Այս բոլորը դժբախտաբար աւելի շեշտուած բնոյթ ստացան հայ-թրքական երկու արձանագրութիւններու ստորագրումէն ասդին, երբ Թուրքիա տարածաշրջան մուտք գործեց աւելի լայն դուռով:*

*Անկախ թէ ի՞նչ ճակատագիր կ՚ունենան այդ արձանագրութիւնները, անոր հասցուցած վնասները նկատելի են արդէն, ու պիտի շարունակեն այդպէս մնալ տեսանելի ապագային եւս:*

# Ի՞ՆՉ ԵՆ ՅՈՒՇՈՒՄ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

**ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ**

*Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան խորհրդարանի ընտրութեան կապակցութեամբ յայտարարութիւն է արել ԵԱՀԿ Մինսկի խումբը, որում տեղ է գտել բաւական ուշագրաւ մի ձեւակերպում: Համանախագահներն ասում են, որ «ըմբռնում են Լեռնային Ղարաբաղի բնակչութեան հասարակական կեանքը դեմոկրատական ընթացակարգով կազմակերպելու գործող իշխանութիւնների առջեւ ծառացած անհրաժեշտութիւնը, սակայն ընդգծում են, որ Լեռնային Ղարաբաղը համանախագահող երեք երկրներից եւ ոչ մէկի կողմից ճանաչուած չէ որպէս անկախ եւ ինքնիշխան պետութիւն: Ղարաբաղը ճանաչուած չէ նաեւ որեւէ այլ երկրի, այդ թւում Հայաստանի կողմից»:*

**Յասկանալի է, որ Ղարաբաղի անկախութեան ճանաչումը լուրջ հարց է եւ պէտք է այն դիտարկել զգացական վիճակէ զերծ դրոյթի մէջ**

*«Ղարաբաղը ճանաչուած չէ նաեւ որեւէ այլ երկրի, այդ թւում Հայաստանի կողմից»: Ահա այդ արտայայտութիւնն է թերեւս բաւական ուշագրաւ: Տպաւորութիւնն այն է, որ համանախագահները կարծես թէ թողարկուած, բայց բաւական թափանցիկ ձեւով Հայաստանին ակնարկում են ինչ որ քայլ անել Ղարաբաղի ճանաչման ուղղութեամբ: Այլապէս ինչու պէտք է համանախագահները շեշտէին Հայաստանի չճանաչելու հանգամանքը: Ինչով էր այն կարեւոր, եթէ ոչ այն իմաստով, որ գոնէ Հայաստանն ինչ որ քայլ պէտք է անի ճանաչման ուղղութեամբ, կամ էլ եթէ ոչ այն իմաստով, որ Հայաստանի չճանաչումը ներկայացւում է իբրեւ արդարացում, որ որեւէ այլ երկիր էլ չի ճանաչել մինչեւ այժմ:*

*Հասկանալի է, որ Ղարաբաղի անկախութեան ճանաչումը լուրջ հարց է եւ պէտք է այն դիտարկել էմոցիաներից զերծ տիրոյթում: Ընդ որում, թերեւս պէտք է ճանաչում ասուածը դիտարկել բազմաշերտ տիրոյթում: Դրա տարբերակը միայն վերցնել ու ԼՂՀ անկախութիւնը ճանաչելու մասին յայտարարութիւն անելը չէ: Պարզապէս կարելի է դիտարկել տարբերակներ, որոնք գուցէ աւելի կը խորացնեն եւ կը լրջացնեն Հայաստանի եւ Ղարաբաղի իրաւապայմանագրային գործակցութիւնը: Կամ, առնուազն գոնէ կարելի է ծաւալել հասարակական-քաղաքական լայն քննարկում: Բանն այն է, որ Հայաստանի հասարակական-քաղաքական դաշտում, յատկապէս քաղաքական դաշտում, Ղարաբաղի անկախութեան հանդէպ Հայաստանի Հանրապետութեան իրաւա-քաղաքական դիրքորոշման հարցը չի էլ քննարկւում:*

*Այդ կապակցութեամբ առաջարկութեամբ է պարբերաբար հանդէս գալիս Ժառանգութիւն կուսակցութիւնը, որը սակայն մերժւում է ոչ թէ քննարկման միջոցով, այլ հենց այնպէս՝ իշխող մեծամասնութեան քմահաճոյքով: Մինչդեռ քննարկումն ինքնին քաղաքական ժեստ է, որ կարելի է ձեռնարկել, որպէս նախաձեռնութիւն: Գուցէ այն տարբերակը, որ օրինակ առաջարկում է Ժառանգութիւնը, նպատակայարմար չէր կիրառել այժմ: Գուցէ: Բայց քննարկումը թերեւս որեւէ դէպքում չի խանգարի եւ չի նուազեցնի Հայաստանի եւ Ղարաբաղի քաղաքական կշիռը, եթէ չաւելացնի էլ: Ընդ որում, դա այդ մասով միայն: Մինչդեռ կարելի է ստեղծել այդօրինակ քննարկումների այլ առիթներ: Հասարակական-քաղաքական մտքի այդօրինակ գեներացիան ամենեւին էլ աւելորդ չի լինի թէ հանրային հոգեբանութեան ձեւաւորման, թէ նաեւ պարզապէս քաղաքական նախաձեռնողականութեան տեսանկիւնից:*

*Ժամանակն է թերեւս, որ Հայաստանի իշխող քաղաքական էլիտա կոչուածը Ղարաբաղի պետականութիւնը իր գործողութիւնների բովանդակային տիրոյթում կենացների մակարդակից բարձրացնի աւելի վեր՝ քաղաքական հարթութիւն, եթէ իհարկէ կարող է եւ ունի ցանկութիւն:*

*«ԼՐԱԳԻՐ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ, ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ, ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680 - Ֆաքս. (626)797- 6863 - E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave. , Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680, Fax: (626) 797-6863, E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՅԱՆՐԱՅԱՒԱՔԸ ԿԻՒՄՐԻՈՒՄ




Բազմամարդ հանրահաւաք Գիւմրիի մէջ

*Մայիս 24-ին Կիւմրիի Թատերական հրապարակը վաղ առաւօտից բազմամարդ էր: ՀԱԿ-ը մեկնարկեց մարզային իր հանրահաւաքների շարքը: Մարդիկ պաստառներով եւ դրօշներով եկել էին հրապարակ արտայայտելու իրենց մտահոգութիւնները եւ լսելու ընդդիմութեան ներկայացուցիչներին:*

*Մինչ կը ժամանէին ՀԱԿ-ի ներկայացուցիչները, հանրահաւաքի մասնակիցները, որոնց մեծ մասը գործազուրկներ եւ թոշակառուներ էին, լրագրողներին յայտնեցին իրենց դժգոհութիւնը ներկայ իշխանութիւններից:*

*Այնուհետեւ ժամանեցին ՀԱԿ-ի անդամ բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները: Հանրահաւաքին չէր մասնակցում միայն Լեւոն Տէր Պետրոսեանը, որը բացակայում է Հանրապետութիւնից:*

*«ՀԱԿ-ը որոշել է սկսել Կիւմրիից, քանի որ այն ամենավճռականն է. ակտիւը եւ ընտրութիւնների ժամանակ մշտապէս ցուցաբերել է հաստատակամութիւնը եւ իր վերաբերմունքը ներկայ իշխանութիւնների հանդէպ»,-բացման խօսքում ասաց ՀԱԿ-ի ներկայացուցիչ Արամ Մանուկեանը;*

*Այնուհետեւ ելոյթ ունեցան քաղբանտարկեալներ Պետրոս Մակէեանը, Դաւիթ Մաթեւոսեանը:*

*Նրանք ընդգծեցին, որ մինչ օրս Հայաստանում կան քաղբանտարկեալներ, թուարկեցին նրանց անունները:*

*«Ժողովրդի սոցիալական բոլոր խնդիրները կը լուծուեն միայն իշխանափոխութիւնից յետոյ»,-ելոյթում նշեց Դաւիթ Մաթեւոսեանը:*

*Հանրահաւաքին մասնակցում են նաեւ Շիրակի մարզի քաղբանտարկեալների հարազատները՝ ձեռքներին պահելով նրանց նկարներով պաստառներ:*

*Ելոյթ ունեցաւ նաեւ նախկին վարչապետ Հրանդ Բագրատեանը, ով տուեց ՀՀ-ում ներկայ իրավիճակի գնահատականը:*

*Նկատենք, որ բոլոր ելոյթները հանրահաւաքի մասնակիցների կողմից ընդունւում են բուռն կերպով, զգացւում էր, որ մեծ մասը շատ բորբոքուած են:*

### ՎՐԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԵՆ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

*Մայիս 24-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ փորձագէտ Վահէ Սարգսեանը, խօսելով Վրաստանի ՏԻՄ ընտրութիւնների մասին օրէնքում տեղի ունեցած փոփոխութիւնների մասին նշեց, որ դրանց արդիւնքում պարտադիր պայման է դարձել այն, որ թեկնածուները պէտք է ներկայացնեն որոշակի քաղաքական կուսակցութիւն, գրանցուած լինեն քաղաքական կուսակցութեան ցուցակներում՝ թէկուզ մեծամասնական հիմքի վրայ:*

*Ըստ նրա՝ Վրաստանում՝ յատկապէս ազգային փոքրամասնութիւնների բնակութեան վայրերում, առանց քաղաքական կուսակցութիւն ներկայացնելու՝ քաղաքացիական նախաձեռնութեամբ, թեկնածութիւնների գրանցումը, փաստօրէն, բացառւում է:*

*Նա նաեւ նշեց, որ այս կարգը բերում է նրան, որ Վրաստանի իշխանութիւններին ոչ հաճելի ուժերը, որոնք, հիմանակնում, ազգային փոքրամասնութիւնների ներկայացրած ազգային ուժերն են, չեն կարողանում առաջադրել իրենց թեկնածութիւնը:*

*Բանախօսն ընդգծեց, որ ընդդիմութիւնը եւս չի գրացնել հայ թեկնածուներին՝ չնայած այն հանգամանքին, որ քննադատում է իշխանութիւններին:*

*«Ընդդիմութեան ոչ մի թեկնածուի քննադատութիւն չի վերաբերում ազգային փոքրամասնութիւններին: Ե՛վ իշխանութեան, եւ՛ ընդդիմութեան ներակայացուցիչները ազգային փոքրամասնութիւնների հիմնախնդիրների նկատմամբ ունեն նոյն դիրքորոշումը. Նրանք քննադատում են մէկը միւսի որդեգրած քաղաքականութիւնը՝ դրա վատ իրականացման համար»,-շեշտեց Վահէ Սարգսեանը:*

*Հայ ազգային ուժերի թեկնածուները, ի վերջոյ, կարողացել են գրանցուել նախկին վարչապետ Զուրաբ Նողաիդելիի «Ազգային խորհուրդ» կուսակցութիւնում, որի անցնելու հաւանականութիւնը, ըստ փորձագէտի, այնքան էլ մեծ չէ:*

### ՖՐԱՆՍԱՅԻ ՅԱՅԱԶԳԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՅԱՆԴԻՊԵԼ Է ՍԱՐԳԻՍ ՅԱՑՊԱՆԵԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

*Անցած շաբաթ Հայաստան այցելած Ֆրանսիայի տնտեսական վերելքի նախարար Պատրիկ Դեւէջեանը հանդիպել է անազատութեան մէջ գտնուող Սարգիս Հացպանեանի կնոջն ու երեխաներին: Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց Հացպանեանի կինը՝ Ցամիկ Պօղոսեանը, ֆրանսիական կառավարութեան հայազգի անդամը հետաքրքրուել է իր ամուսնու գործի մանրամասներով:*

*Ֆրանսիայի քաղաքացի Սարգիս Հացպանեանը Քրէական օրէնսգրքի 333 յօդուածի երկրորդ մասով (սուտ մատնութիւն) դատապարտուել է 3,5 տարի ազատազրկման եւ անազատութեան մէջ է 2008 թուականի Նոյեմբերից: Նրա դէմ քրէական գործ էր յարուցուել «Հայկական ժամանակ» օրաթերթի մի հրապարակման հիման վրայ, որտեղ Հացպանեանը պնդել էր, թէ «Սերժ Սարգսեանի դէմ մահափորձ է նախապատրաստւում»:*

### «ՄԵԾ ՍԽԱԼԻ ՎՏԱՆԳԸ ԴԵՌ ՉԻ ՎԵՐԱՑԵԼ»

*Վերջին 2 տարուայ ընթացքում ՀՀ-ում ընթացող ներքաղաքական զարգացումները Պաշտպանութեան նախկին նախարար Վաղարշակ Յարութիւնեանը համարում է 2008թ. Մարտի 1-ի ողբերգական դէպքերի հետեւանք: «2008թ. ընտրութիւնների արդիւնքում ստեղծուած քաղաքական ճգնաժամը մինչ օրս չի յաղթահարուել: Փաստօրէն Ցատուկ քննչական ծառայութիւնն ու Մարտի 1-2-ի դէպքերն ուսումնասիրող Աժ ժամանակաւոր յանձնաժողովը ոչինչ չբացայայտեցին եւ աւելի խորացաւ հասարակութիւն-իշխանութիւն հակասութիւնները»,-«Ա1+»-ի հետ զրոյցում ասաց պարոն Յարութիւնեանը:*

*Այսօր մեր երկրի առաջ ծառացած հիմնական խնդիրներից մէկը նա համարում է ստորագրուած հայ-թուրքական արձանագրութիւնները: Քանի դեռ արձանագրութիւններից հետ չեն կանչուել հայկական կողմի ստորագրութիւնները, Վաղարշակ Յարութիւնեանը գտնում է, որ վտանգը չի վերացել:*

*Որպէս վտանգի առկայութեան վառ օրինակ նա համարում է վերջին շրջանում Թուրքիայի կողմից ազատագրուած երկու տարածքները վերադարձնելու մասին յայտարարութիւնները. «Որեւէ նշանակութիւն չունի դու մէկ շրջան ես յանձնում, երկու, թէ՝ եօթ: Խորհրդարանի ընտրութիւններից առաջ այսօր Թուրքիան իրեն փորձում է կառուցողական ներկայացնել, եւ դա արդիւնք է տալիս: ԼՂ հարցում, Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացում Թուրքիայի դիւանագիտութիւնն աշխատելու է այնքան ժամանակ, քանի դեռ մենք արձանագրութիւններից հետ չենք կանչել մեր ստորագրութիւնը»*

### ԵՐԵՒԱՆԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՅՐԱՊԱՐԱԿԸ ՎԵՐԱԲԱՑՈՒԵՑ

*Ազատութեան հրապարակը կրկին ազատութիւն ստացաւ: Հրապարակի մուտքը արգելող ժապաւէնները հեռացուեցին:*

*Յիշեցնենք, որ այն փակ էր քաղաքացիների համար 2008թ. Հոկտեմբերից:*

*Հրապարակը նախկին տեսքն ունի, պարզապէս բարեկարգուած է: Նախկին տեղերում են Ալեքսանդր Սպենդիարեանի եւ Յովհաննէս Թումանեանի արձանները,որոնք տեղափոխուել էին նորոգման աշխատանքների հետ կապուած:*

*Աւարտուել է նաեւ Ազատութեան հրապարակում 500 աւտոմեքենայի համար ստորգետնեայ աւտոկանգառի շինարարութիւնը, որը նախատեսւում էր Երեւանի փոքր կենտրոնը տրանսպորտային միջոցների կայանումից ազատելու համար:*

*Շինարարութիւնը իրականացրել է «Ռենկօ Արմեստեյտ» ՍՊԸ-ն «Հայնախագիծ» ՓԲԸ հետ համատեղ մշակուած եւ եւրոպական առաջատար մասնագիտացուած ընկերութիւնների կողմից դրական եզրակացութիւն ստացած նախագծով:*



Մեքենաներու համար նորակառոյց ստորգետնեայ կանգառ

### ՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ՝ ՄԱՐՏԻ 1-Ի ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՅՑԸ ՅԱՄՈԶԻՉ Է ԳՐՈՒԱԾ



Հայաստանի մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեան

*Հայաստանի Օմբուդսմեն (մարդու իրաւունքների պաշտպան) Արմէն Յարութիւնեանին լրագրողները հարցրեցին, թէ ինչ է պատրաստւում անել ՄԻ պաշտպանը Մարտի 1-ի դէպքերն ուսումնասիրող Փաստահաւաք խմբի ընդդիմադիր անդամների ներկայացրած վերջին զեկոյցում բերուած փաստերի առնչութեամբ:*

*«Անկեղծ ասած, տուեալ դէպքում մեր անելիքը չգիտեմ, բայց այդ հարցով այսօր պաշտօնապէս զբաղւում է պետաիրաւական յանձնաժողովը: Կարծում եմ ճիշդ կը լինէր, որ այդ յանձնաժողովը ուսումնասիրէր նաեւ այդ զեկոյցը, որովհետեւ, յիշում էք՝ ԵԽԽՎ վերջին բանաձեւերից մէկում նշուած էր, որ Փաստահաւաք խմբի անդամները կարող են նաեւ առանձին ներկայացնել իրենց զեկոյցները, եւ կարծում եմ, որ ճիշդ կը լինէր, որ այդ յանձնաժողովն անդրադառնար դրան, ուսումնասիրէր եւ իր կարծիքը ներկայացնէր, նաեւ ընդգրկէր իր գործունէութեան մէջ»,-ասաց Արմէն Յարութիւնեանը:*

*Նա նաեւ տեղեկացրեց, որ կարդացել է եւ ծանօթ է Փաստահաւաք խմբի անդամների վերջին զեկոյցին:*

*«Ես ասեմ ձեզ՝ բաւականին համոզիչ գրել են, եւ համապատասխան պետական կառոյցները պէտք է դա քննութեան առնեն, բայց մի կողմի գրածը բաւարար չէ, որպէսզի ես՝ որպէս իրաւաբան, ասեմ՝ համոզիչ է, թէ ոչ, որովհետեւ պէտք է դա բազմակողմանի ուսումնասիրել: Բայց որ դա պէտք է լրացուցիչ խթան հանդիսանայ այդ հարցերը մէկ անգամ եւս ուսումնասիրելու համար, համոզուած եմ, որովհետեւ դա մեզ բոլորիս է պէտք»:*

# ԼՈՒՐԵՐ

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՇՈՒՏԱՓՈՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԻՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

*Մարդու իրաւունքների միջազգային ֆեդերացիան եւ հայաստանեան երկու իրաւապաշտպան կազմակերպութիւններ կոչ են անում շուտափոյթ իրականացնել Հայաստանի կառավարութեանն ուղղուած՝ ֆեդերացիայի առաջարկութիւնները:*

*Մարդու իրաւունքների միջազգային ֆեդերացիայի, Քաղաքացիական հասարակութեան ինստիտուտի եւ Հայաստանի հելսինքեան կոմիտէի՝ Չորեքշաբթի օրը տարածած համատեղ յայտարարութիւնում ասուած է. - «Մենք ցաւով նշում ենք, որ մարդու իրաւունքների պաշտպանութեան հարցերում որոշ թերութիւններ արձանագրելու եւ դրանք ուղղելու պատրաստակամութիւն դրսեւորելու փոխարէն Հայաստանի իշխանութիւնները գտնում են, որ պատուիրակների կողմից արուած առաջարկութիւնների կէսը արդէն իրականացուել է»:*

*Դեռ այս տարուայ Ապրիլի 6-ին, երբ Երեւանում աշխատանքներն էր սկսում Մարդու իրաւունքների միջազգային ֆեդերացիայի 37-րդ համաժողովը, ֆեդերացիայի նախագահ Սուհէր Բելասենը բացման արարողութեան ժամանակ կոչ արեց Հայաստանի իշխանութիւններին ազատ արձակել քաղբանտարկեալներին եւ 2008 Թուականի Մարտի 1-2-ի իրադարձութիւնների անաչառ քննութիւն իրականացնել: Ֆեդերացիան մի շարք առաջարկութիւններ էր ներկայացրել Հայաստանի իշխանութիւններին, որոնք թոյլ կը տային բարելաւել իրավիճակը մարդու իրաւունքների ոլորտում: Սուհէր Բելասենը նշել էր, որ հետեւելու են, թէ որքանով է Հայաստանը այդ առաջարկները կեանքի կոչում:*

*Մօտ երկու շաբաթ առաջ Ժընեւում հրաւիրուած ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների խորհրդի համընդհանուր պարբերական դիտարկման նստաշրջանում արտգործնախարարի տեղակալ Արման Կիրակոսեանը ներկայացրել էր մարդու իրաւունքների պաշտպանութեան վիճակի վերաբերեալ Հայաստանի կառավարութեան զեկոյցը:*

*Հայաստանում Մարդու իրաւունքների միջազգային ֆեդերացիայի անդամ կազմակերպութեան՝ Քաղաքացիական հասարակութեան ինստիտուտի ներկայացուցիչ Արտակ Կիրակոսեանը, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ներկայացնելով իրաւապաշտպան կազմակերպութիւնների յայտարարութիւնը, նշեց. - «Խօսքը, առաջին հերթին, իհարկէ, Մարտի 1-ի դէպքերի մասին է, որովհետեւ խնդիրն այն է, ու դրա մասին անընդհատ ասել է Մարդու իրաւունքների միջազգային ֆեդերացիան, որ այն, որ ինչպէս է անցկացուել հետաքննութիւնը, ամբողջովին չի բաւարարում, մեր հասարակութեանն էլ կարծում եմ, ու կարեւոր է, որ վերջիվերջոյ այդ 10 մահերի մեղաւորները պատժուեն»:*

*Ըստ յայտարարութեան, բազմաթիւ պատուիրակութիւններ մտահոգութիւն են յայտնել հաւաքների ազատութեան, իրաւապաշտպանների եւ լրագրողների իրաւունքների սահմանափակումների վերաբերեալ:*

*«Բացի այդ, «Ա1+»-ի խնդիրն է, որը, գիտէք, անընդհատ դրւում է, ու էլի այդ հարցը բարձրացուել է տարբեր երկրների կողմից», - ասաց Արտակ Կիրակոսեանը:*

*Հարցին, թէ այս յայտարարութիւնը ինչ ազդեցութիւն կարող է ունենալ Հայաստանի իշխանութեան գործունէութեան վրայ, իրաւապաշտպանը արձագանքեց. - «Կարեւոր է այս պարագայում ոչ միայն մեր կառավարութեան համար, այլ նաեւ մեր հասարակութեան համար, որ իմանան, անհետ չգնան այս բոլոր յայտարարութիւնները: ՄԱԿ-ը մի քիչ ծանր կառոյց է այդ իմաստով, ու անշուշտ այն երկրները, որոնք այդ հարցերը բարձրացրել են, իրենք կը շարունակեն ինչ-որ ձեւով արձագանքել դրան: Չի մոռացւում այդ հարցերը, ու պէտք է պարբերաբար դրանց վրայ աշխատել»:*

## ԺԻՐԱՅՐ ԼԻՊԱՐԻՏԵԱՆ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿԸ ՓՈՐՁԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՈՒԻՆ ԶԻՋՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ»



Ժիրայր Լիպարիտեան

*«Եթէ ժամանակը ճիշդ է, եւ Մոսկուան մեծ գին չի վճարելու, ապա այն կը փորձի Հայաստանի հաշուին զիջումներ կատարել Թուրքիային», - մեկնաբանելով ռուս-թուրքական վերջին բանակցութիւնները եւ Ռուսաստանի նախագահ Մեդվեդեւի՝ առաջիկայում սպասուող այցը Հայաստան, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում կարծիք յայտնեց Հայաստանի առաջին նախագահի նախկին գլխաւոր խորհրդական Ժիրայր Լիպարիտեանը:*

*Մայիսի 11-12-ին, յիշեցնենք, Թուրքիա կատարած պաշտօնական այցելութեան ընթացքում Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը յայտարարեց, թէ Ռուսաստանը կ՚օգտագործի բոլոր հնարաւորութիւնները՝ առաջ մղելու Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծումը, միեւնոյն ժամանակ՝ այդ հարցում խորհրդակցելով Թուրքիայի հետ:*

*«Անցեալում արել է եւ նորից կ՚անի», - ասաց Լիպարիտեանը՝ շարունակելով. - «Ռուսաստանի համար հարցը հետեւեալն է՝ ինչ ձեւով անի, որ ինքը պատասխանատու չնկատուի մեր ժողովրդի կողմից: Եւ ոնց անի, որ սա չխանգարի ինչ-որ աւելի բարձր մակարդակի միջազգային յարաբերութիւնների մէջ՝ իր պրոբլեմները Ամերիկայի հետ, Եւրոպայի հետ»:*

*Անկարայի Տնտեսագիտութեան եւ տեխնոլոգիայի համալսարանի պրոֆեսոր, միջազգայնագէտ Միթաթ Չելիկպալայի կարծիքով, Թուրքիայում սպասելիքներ կան, որ Ռուսաստանը կը կարողանայ ճնշում բանեցնել Հայաստանի վրայ՝ Լեռնային Ղարաբաղի հարցում՝ «որոշակի դրական քայլեր ձեռնարկելու համար*

## ՔԻՆԻՔԼԻՕՂԼՈՒՆ ՊՆԴՈՒՄ Է, ՈՐ ԹՈՒՐՔԻԱՆ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*Թուրքիայի խորհրդարանի «Բարեկամութիւն» խմբաւորման նախագահ, «Արդարութիւն եւ զարգացում» իշխող կուսակցութեան արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի փոխնախագահ Սուաթ Քինիքլիօղլուն Վաշինգթոնում ասել է, թէ Հայաստանը համաձայնել է որոշ ժամանակ լռութիւն պահպանել եւ ուսումնասիրել հայ - թուրքական յարաբերութիւնների կարգաւորման վերաբերեալ նոր առաջարկը:*

Worldbulletin *լրատուական կայքի փոխանցմամբ, թուրք խորհրդարանականը, մասնաւորապէս, ասել է. - «Սեղանին դրուել է նոր առաջարկ, ես չեմ կարող մանրամասնել, բայց կարող եմ ասել, որ դա հրաշալի առաջարկ է հայ - թուրքական յարաբերութիւնների համար, եւ հիմա Հայաստանից է կախուած այն ընդունել կամ մերժելը: Կողմերը շատ մօտ են յարաբերութիւնների բարելաւմանը եւ ես անձամբ սատարում եմ այդ գաղափարին»:*

*Քինիքլիօղլուն յաւելել է, թէ բարելաւումը տեղի կ՚ունենայ թուրք եւ հայ ժողովուրդների քաղաքական կամքով»:*

*Անդրադառնալով Թուրքիայի իշխող կուսակցութեան փոխնախագահի՝ ԱՄՆ-ում արած այն յայտարարութեանը թէ այժմ Հայաստան - Թուրքիա բանակցային սեղանին դրուած է նոր փաստաթուղթ, որի ընդունումը կախուած է Հայաստանից, Էդուարդ Նալբանդեանը ասաց, թէ դա իրականութեանը չի համապատասխանում. - «Դա բացարձակ սուտ է, եւ ստերը մեկնաբանելու կարիք չունեն»:*

*Հայաստանի արտգործնախարարը բացարձակ սուտ որակեց նաեւ այն տեղեկութիւնները, թէ այժմ քննարկւում է հայկական զինուած ուժերը Ղարաբաղը շրջապատող երկու տարածքներից՝ Ֆիզուլիից եւ Քելբաջարից դուրս բերելու հարցը:*

## ՂԱՐԱԲԱՂԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

*կարգաւորման հարցում գործ ունենալու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից ընտրուած իշխանութիւնների հետ, առաւելեւս, որ դա նախատեսուած է ԵԱՀԿ Մինսկի համաժողովի անցկացման մասին մանդատով»,- ըսած է ան:*

*ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներ ռուսաստանցի Իգոր Պոպով, ֆրանսացի Պեռնար Ֆասիէ եւ ամերիկացի Ռոբերդ Պրադկէ նոյնպէս հանդէս եկած են յայտարարութեամբ, ուր անդրադարձած են Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն: Անոնք յայտնած են, որ «կ՚ըմբռնեն Լեռնային Ղարաբաղի բնակչութեան հասարակական կեանքը դեմոկրատական ընթացակարգով կազմակերպելու գործող իշխանութիւններու առջեւ ծառացած անհրաժեշտութիւնը, սակայն կ՚ընդգծեն, որ Լեռնային Ղարաբաղը համանախագահող երեք երկիրներէն եւ ոչ մէկուն կողմէ ճանչցուած չէ որպէս անկախ եւ ինքնիշխան պետութիւն: Ղարաբաղը ճանչցուած չէ նաեւ որեւէ այլ երկրի, որոնց շարքին նաեւ Հայաստանի կողմէ»:*

## ԹՈՒՐՔԻԱՆ ՎԱՏՆԵԼ Է

Շարունակուած էջ 1-էն

*կառավարումը, խաղաղապահ առաքելութիւնը եւ այլն:*

*Սարգսեան ընդգծած է Հայաստանի զինուած ուժերէն ներս կատարուող բարեփոխումներու ծրագրին Դաշինքի կողմէ ցուցաբերուող օժանդակութեան արդիւնաւէտութիւնը:*

*Կողմերը մտքեր փոխանակած են նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ լուծման ներկայ հանգրուանի շուրջ:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ

# ՊԱՏՇԱՃ ՅՈՒՇԱՀԱՆԴԷՍՈՎ ՄԸ ՆՇՈՒԵՑԱՒ ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑԸ

*Գ. Մ.*



*Անցեալ Կիրակի, Մայիսի 23-ին, 2010, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, հոգեհանգստեան յատուկ արարողութեամբ մը նշուեցաւ «Մասիս» շաբաթաթերթի հիմնադիր խմբագիրներէն՝ Տօքթ. Յարութիւն Սաղրեանի մահուան առաջին տարելիցը: Օրուան պատարագիչն էր Արժ. Տ. Սարգիս Քհնյ. Փէթոյեան, իսկ հոգեհանգստեան տխուր արարողութեան նախագահեց Հոգշ. Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան:*

*Այնուհետեւ Հ.Մ.Մ.ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ յիշատակի հոգեճաշ եւ պատշաճ հանդիսութիւն, որուն ներկայ էին հանգուցեալի հարազատները, ինչպէս նաեւ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան եւ շրջանի Վարիչ Մարմնի ղեկավար ընկերները, կուսակցական մասնաճիւղերու, հայ մամուլի, հեռուստակայաններու, միութիւններ եւ տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:*

*Սեղաններու օրհնութիւնը կատարեց հանգուցեալի մերձաւորներէն՝ Պատ. Ճան Մելգոնեան:*

*Ճաշի սպասարկութենէն ետք գործադրուեցաւ յատուկ յայտագիր մը: Օրուան հանդիսավարն էր «Մասիս»ի խմբագրական կազմէն Գաբրիէլ Մոլոյեան: Ան ոգեկոչելով յիշատակը Տօքթ. Յարութիւն Սաղրեանի՝ անդրադարձաւ անոր բազմակողմանի արժանիքներուն, թէ՛ որպէս բժիշկ, թէ՛ լրագրող, հրապարակագիր, հասարակական բեղուն գործիչ եւ թէ հայ մշակոյթի ու հայ դատի մեծ սատարաող մը: Ան իր ետին կը ձգէ բաց մը, որ զգալի է ամենուրեք:*

*«Մասիս»ի գլխաւոր խմբագիր Տօքթ. Արշակ Գազանճեան իր խօսքին մէջ ընդգծեց Տօքթ. Յ. Սաղրեանի նկարագրային առանձնայատկութիւնները: «Իր տխուր մահով մեր թերթն ու իր գաղափարի ընկերները կորսնցուցին նուիրեալ շարքային մը, նախաձեռնող առաջնորդ մը, յոգնիլ չի գիտցող փնտռուած հրապարակագիր մը, իրաւ ազգասէր եւ հայրենասէր անձ մը: Ան իր կեանքի բովանդակ շրջանին, իր ժամանակն օգտագործեց մեր գաղութի հասարակական կեանքի առաւել եւս զարգացումին»:*

*Ներկաներուն ցուցադրուեցաւ տեսաերիզ մը, որուն մէջ ինք վերջին անգամ ըլլալով ելոյթ կ'ունենար շուրջ տարի մը առաջ, Պաթոն Ռուժ քաղաքին մէջ տեղի ունեցած Մեծ Եղեռնի նուիրուած հանդիսութեան առթիւ: Արդարեւ դժբախտաբար այս մէկը կարծէք եղած ըլլար իր «Կարապի Երգը»...:*

*Այնուհետեւ յաջորդաբար իրենց սրտի խօսքերով հանգուցեալ Տօքթ. Յ. Սաղրեանի մասին ելոյթներ ունեցան Ամերիկահայ Գրողներու Միութեան նախագահ՝ Թորգոմ Փոսթաճեան, Հայ-Ամերիկեան Հեռուստաժամի Տնօրէն Սարգի Մուրատեան, Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան, Ս.Դ.Հ.Կ. Արսէն Կիտուր մասնաճիւղի անունով Ժօժէնի Պարսումեան, Գալիֆորնիոյ Հայ Գրողներու Միութենէն Ներսէս Պալայեան, «Տը Արմինիըն Օպզըրվըր» թերթի խմբագիր Օշին Քէշիշեան, «Նոր Կեանք» շաբաթաթերթի հրատարակիչ Գրիգոր Շէնեան, երաժշտագէտ եւ խմբավար Հենրիկ Անասեան, Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնին Թովմաս Էթարեան: Վերջին խօսք առնողն էր Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տօքթ. Համբիկ Սարաֆեան: Ան արժեւորելով հանգուցեալ Տօքթ. Յ. Սաղրեանի բազմաբնոյթ վաստակ, մասնաւորաբար անդրադարձաւ իր գաղափարանուէր աշխատանքներուն վրայ թէ որպէս Կեդրոնական Վարչութեան գործօն անդամ եւ թէ որպէս պարզ շարքային, իր կարեւոր ներդրումն ունենալով այս գաղութէն ներս:*

*Ընտանիքի անունով ելոյթ ունեցաւ հանգուցեալի որդին՝ Յովնաթան Սաղրեան: Ան շնորհակալութիւն յայտնեց «Մասիս»ի խմբագրութեան, յատկապէս վերջին թիւով իր հօր մասին եղած գրութեան համար, ինչպէս նաեւ Ս.Դ.Հ.Կ.ի ղեկավարութեան եւ բոլոր անոնց որոնք իրենց ելոյթներով արժեւորեցին հանգուցեալի վաստակը, մեծ սփոփանք պատճառելով ընտանիքի անդամներուն եւ անմիջական հարազատներուն:*

*«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:*




# ՀԵՏԱՔՐՔԻՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ

*ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ*

*Երկու ամսից աւելի է, որ Հայաստան աշխարհում եւ Սփիւռքում թեւածում է մի լուր, որը հպարտութեամբ է լցնում իւրաքանչիւր հայի սիրտը:*

*Խօսքը ճանաչուած կոմպոզիտոր, դիրիժոր Հենրիկ Անասեանի յօրինած, աշխարհում առաջին եւ միակը հանդիսացող դուդուկի կոնցերտի մասին է:*

*Որքան էլ տարօրինակ եւ զարմանալի թուայ, այդ ստեղծագործութիւնը համաշխարհային առաջին կատարմանը արժանացաւ օտար կատարողների շնորհիւ:*

*Այսպէս. այս տարուայ Մարտի 5ին Վենեզուէլայի Քարաքաս մայրաքաղաքի նշանաւոր Սիմոն Բոնիվար համերգասրահում, նոյնանուն սիմֆոնիկ նուագախումբը եւ հայ երաժշտասէր հասարակութեանը քաջածանօթ երաժիշտ Պէդրօ Էուստաչէն կատարեցին Հենրիկ Անասեանի միանգամայն ազգային հնչերանգներով պարուրուած այդ սքանչելի ստեղծագործութիւնը:*

*Նուագախմբի փայլուն դիրիժոր Ալֆրէդօ Ռուէհելէսը չափազանց մեծ զգայնութեամբ է կարողացել վեր հանել նուագախմբային ճոխ ու սքանչելի գոյների մաքրութիւնն ու պայծառութիւնը:*

*Գրեթէ 15 տարի Պէդրօ Էուստաչէն փորձում է վերջնականապէս իրեն հպատակեցնել մեր ազգային, հպարտութիւն առաջացնող, արդէն համաշխարհային բեմ բարձրացած, հայի հոգու իրական թարգմանը հանդիսացող ծիրանափողը:*

*Վերջին մի քանի շաբաթուայ ընթաքին, հայկական հեռուստատեսութեան մի քանի ծրագրերով բազմիցս խօսուեց ստեղծագործութեան մասին եւ ցուցադրուեց Հենրիկ Անասեանի դուդուկի եւ սիմֆոնիկ նուագախմբի համար գրուած կոնցերտի տեսագրութիւնը: Մեր հայրենիքի երաժշտասէրներն էլ հաղորդակից դարձան մեր օրերի համար բաւական նշանակալի այդ երեւոյթին:*

*Անասեանի դուդուկի կոնցերտի ժողովրդականացմանը մեծապէս նպաստեց Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի Հիւպատոսութեան կողմից կազմակերպուած երեկոն, որ տեղի ունեցաւ Մայիսի 18ին, Կլենտէյլի նորաբաց NYX ակումբում: Աւագ հիւպատոս Պրն. Գրիգոր Յովհաննիսեանի եւ Հայաստանի Հ1 հեռուստատեսաւթին կայանի Լոս Անճելըսի թղթակից Լիլիթ Դերակեանի աջակցութեամբ իրականացած այդ մտերմիկ երեկոն նպատակ ունէր աւհնութեանը ծանօթացնել Դուդուկի կոնցերտի զոյգ հերոսներին՝ հեղինակ Հենրիկ Անասեանին եւ դուդուկահար, վենեզուելացի տաղանդաւոր երաժիշտ Պէդրօ Էուստաչէին:*

*Հենրիկ Անասեանը պարզ, առանց աւելորդ մեկնաբանութիւնների պատմեց կոնցերտի ստեղծման շարժառիթների, մանաւանդ այն մտահոգութեան մասին, որ իր երեւակայութեան մէջ առաջացել է այն մտավախութիւնից, որ թուրքերը վաղը միւս օր կարող են «իւրացնել» մեր ազգային գործիքը, ինչպէս որ նրանք սովոր են իւրացնել, վերցնել, փախցնել ամէն ինչ՝ ինչ-որ իրենցը չէ:*

*Պէդրօ Էուստաչէն պատմեր էր ազգային գործիքի հանդէպ տածած անվերապահ նուիրման, հայ ժողովրդական երաժշտութեան նկատմամբ տածած անհուն սիրոյ մասին, որ ահա մէկուկէս տասնամեակ շարունակ ոգեւորում է իրեն*

*Շար.ը էջ 19*



# «ՋԱՆ ԹԱՒՐԻԶ»

*Ընթացիկ տարուայ Մարտի 20-ին ներկայ էի մի ոգեշնչող ու խանդավառ երեկոյթի:*

*Թաւրիզահայութեան հայրենակցական գործադիր մարմինը, նպատակ ունենալով առիթ ստեղծելու ի մի հաւաքել Թաւրիզահայութեան վերահանդիպել, վերյիշել եւ ծանօթացնել Իրանի Ատրպատական նահանգի եւ Թաւրիզ քաղաքի ազգային պատմամշակութային արժէք ներկայացնող անցեալը ներկայ սերունդին եւ հայ համայնքին, կազմակերպել էր սոյն անմոռանալի երեկոն: Գործադիր մարմնի նուիրեալ եւ պատասխանատու մասնակիցների անվերապահ ջանքերի շնորհիւ այս ձեռնարկը գնահատելի – բացառիկ երեւոյթ է: Ներկայ եմ եղել երեկոյթներին ու հիացած եմ տեսնելով կազմակերպութեան ծիլարձակման ու նպատակասլաց բարգաւաճման արագընթացը (այս կարճ ժամանակաշրջանում ընդամենը հինգ տարում): Սրտանց ցանկանում եւ մաղթում եմ յարատեւ ուժ ու կորով իրագործելու ներքոյիշեալ ազգանուէր ու վսեմ նպատակները:*

*Ձեռնարկը տեղի ունեցաւ Գլենդելի Սիւիկ Ադիթորեօմում երեկոյեան ժամը 6-ից մինչեւ ուշ գիշեր շուրջ 550 հիւրերի ներկայութեամբ, ուրախ ու խանդավառ մթնոլորտում: Առաջին երկու ժամը յատկացուած էր նկարների ցուցադրման որը տեղադրուած էր ներքեւի ընդարձակ սրահում:*





*3000 նկարները աւելի քան 150 տարուայ Թաւրիզահայութեան ազգային, մշակութային եւ պանծալի անցեալի վկաներն են, որը բաւական հետաքրքիր – ուսուցանող երեւոյթ է:*

*Տէր Յովնան Արք. Տէրտէրեանը Ս. Էջմիածին գործուղման մէջ լինելով ներկայ չէր, ներկայ էին Գլենդելի Ս. Գէորգ եկեղեցու հոգեւոր հովիւ Տէր Մամբրէ Քեսաբեանը եւ Յովնան սարկաւագ Վարդանեանը:*

*Ներկայ էին Տէր Մուշեղ Արք. Մարտիրոսեանը եւ Ս. Աստուածածին եկեղեցու հոգեւոր հովիւ՝ Տէր Կոմիտաս Թորոսեանը, որոնց մեծարգոյ ներկայութիւնը հոգեւոր եւ բարոյական ներշնչանք էր ոչ միայն յանձնախմբի այլ բոլոր մասնակիցների համար:*

*Երեկոն բացւեց հոգեւոր հայրերի Տէրունական աղօթքով, որից յետոյ դրուատանքով արտայայտւեցին Թաւրիզահայութեան փայլուն անցեալի եւ ազգային ոգու ու հայրենասիրութեան մասին:*

*Ձեռնարկի հիմնական նպատակներից է Հայրենիքի Սիսեան քաղաքում հիմնել մարզա-մշակութային կենտրոն, երջանկայիշատակ Տ. Ներսէս Արք. Մելիք Թանգեանի անուամբ, յաւերժացնելու այն մեծ եւ ազգանուէր հոգեւորականի յիշատակը, որը իր ամբողջ կեանքը նուիրաբերել է հայութեան բարօրութեան, հայրենիքին եւ Հայաստանեայց Ս. Եկեղեցուն:*

*Այս հայրենանուէր գործը արժանացել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուշադրութեան, որը Սիսեան քաղաքում Սիւնեաց թեմի փոխ-առաջնորդարանի երկյարկանի շէնքը տրամադրել է այս ծրագրի իրագործման:*

*Ուշադրութեան արժանի է նաեւ այն հանգամանքը որ առաջին եւ երկրորդ տարիների հաւաքները կարծէք թէ հետաքրքիր էր միայն Թաւրիզում ծնուած եւ մեծացած տարէցներին, պարզա-*

*Շար.ը էջ 19*


## Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարան

## AGBU Vatche and Tamar Manoukian High School

Նոր Աշակերտներու Արձանագրութիւն, 9րդ-12րդ Դասարաններ

***New Student Enrollment, Grades: 9-12***

- ✓ College Preparatory Academic Program
- ✓ Honors or Advance Placement (AP) Level Instruction in all subject areas
- ✓ Small Class Sizes and Individual Attention
- ✓ Visual Performing Arts Program in Dance, Drama, Theater, Music and Choir
- ✓ Comprehensive Armenian Curriculum
- ✓ Technology and Computer Program
- ✓ College Counseling and Admissions Guidance
- ✓ Co-curricular and Extra-Curricular Activities including Competitive Sports
- ✓ Safe and Secure Closed Campus

*Կրթաթոշակներ տրամադրելի են այն աշակերտներուն, որոնք ուսումնական բացառիկ յաջողութիւն ցուցաբերած են, ինչպէս նաեւ գերազանց ընդունակութիւն ունին հետեւեալ մարզերէն ներս.-*

*Հայագիտութիւն – «Technology» – Երաժշտութիւն – Թատրոն – Պարարուեստ*

*Ձեր Զաւակներուն Համար Կատարեցէք Լաւագոյն Ընտրութիւնը*

*Ուսում, Կրթութիւն, Յաջողութիւն*

**Call: (626) 794-0363**
**We are located at 2495 E. Mountain St, Pasadena, CA 91104**

## ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԸ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ



*Ապրիլ ամիս մը եւս ապրեցաւ հայ ժողովուրդը եւ անգամ մը եւս յիշեց տխուր անցեալը, մղկտաց հին ցաւերով, սակայն խայտաց անոր սիրտը ի տես հազարաւոր, տասնեակ հազարաւոր երիտասարդներու՝ իր նոր սերունդներուն, որոնք ի սփիւռս աշխարհի վերանորոգեցին իրենց հայ ապրելու ուխտը, հայութիւնը պահելու կամքը:*

*Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանէն ներս Ապրիլ ամիսը անցաւ լեցուն՝ այլազան գործունէութիւններով, բոլորն ալ նուիրուած 20րդ դարու առաջին ցեղասպանութեան, 1915 Մեծ Եղեռնի 95րդ տարեդարձին:*

*Ամբողջ ապրիլ ամսուան ընթացքին աշակերտները որպէս համազգեստ հագուեցան 95-ամեակի թեմայով Մերտինեան Վարժարանի համար պատրաստուած շապիկներ:*

*Ապրիլ 15-16ին տեղի ունեցաւ վարժարանիս «Պատանի Հեղինակներու Գործեր»ու ցուցահանդէսը: Առաջինէն մինչեւ 8րդ կարգի իւրաքանչիւր աշակերտ գրեց երկու «գիրք»՝ հայերէնով եւ անգլերէնով, նիւթ ունենալով Հայկական Ցեղասպանութիւնը կամ արդարութիւն, պահանջատիրութիւն: Գիրքերը կարդացուեցան եւ դատուեցան այլ վարժարաններու ուսուցիչներու կողմէ եւ մրցանակներ ստացան Ա., Բ., Գ. տեղ գրաւող եւ մասնաւոր յիշատակութեան արժանի աշակերտները:*

*Ապրիլեան յաջորդ ձեռնարկը՝ Յուշահանդէսը պատրաստուած վարժարանի Հայկական Բաժանմունքին կողմէ, տեղի ունեցաւ 22 Ապրիլին, կէսօրէ ետք աշակերտութեան համար, իսկ երեկոյեան՝ ծնողաց եւ հիւրերու: Ձեռնարկը բացաւիկ կերպով տպաւորեց ներկաները, որոնցմէ շատեր, ինչպէս մասնակցող աշակերտները իրենք, ապրեցան հպարտութեան՝ տխրութեան եւ հրճուանքի անզուգական պահեր: Առաջին հերթին սրահէն մուտք գործեցին եւ խրոխտօրէն տողանցեցին հայկական 4 թագաւորութիւններու դրօշակները եւ զանոնք բերող տարազաւոր դրօշակակիրները: Ցեղասպանութեան պատկերը ներկայացուցին նախ 7 ուրուականներ՝ իւրաքանչիւրը տարբեր շրջաններէ եկած, պատմեցին, այնքան հարազատօրէն, հայ*



*ժողովուրդին տառապանքն ու ջարդը. անոնց հետեւեցաւ գաղթականներու խումբ մը՝ հաց ու ջուր՝ խնդրելով աջէն ու ձախէն, որմէ վերջ «Տէր Ողորմեա»յի մեկնաբանական մենապար մը կատարուեցաւ: Ներկաները արցունքոտ աչքերով դիտեցին այս բոլորը:*

*Վերջին պատկերը սակայն հրճուանքով լեցուց բոլորին սրտերը: «Երբ չի մնում ելք ու ճար՝ խենթերն են գտնում հնար» երգով թնդաց սրահը երբ մուտք գործեցին Անկախ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի դրօշակները, ապա, ուրուականները իրենց քօղերը մէկդի նետելով պարով մը ներկայացուցին Հայ ժողովուրդի վերածնունդ: Ձեռնարկը փակուե-*

*Շար.ը էջ 19*

## ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ $250,000 ԱՐՇԱԿ ՏԻԳՐԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

*Անցեալ Կիրակի Ամերիկահայ Ֆիլի հիմնարկութիւնը շքեղ ընդունելութեամբ մը պատուեց իր անդամներէն Ուալթըր Գարապեան: Սոյն ընդունելութեան ներկայ էին Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի անդամ Փոլ Գրիգորեան եւ այլ ազգայիններ:*

*Ընդունելութեան ընթացքին ներկաներուն համար մեծ անակնկալ մը եղաւ երբ Ուալթըր Գարապեան պաշտօնապէս յայտնեց թէ իր ազգականներէն Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սաթենիկ Միհաճեան 250,000 տոլարի իշխանական նուիրատուութիւն մը կատարած են ԹՄՄ-ի Արշակ Տիգրանեան վարժարանին:*

*Կ՛իմանանք թէ վարժարանի հոգաբարձական խորհուրդը որոշած է այս առթիւ դպրոցի համակարգիչներու դասարանը անուանել նուիրատու զոյգին անունով:*

«Քահանայութիւնը՝
Վերապարանափոխում է»

*Նախագահութեամբ՝*
Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Թեմական Խորհուրդին
*Կազմակերպութեամբ՝*
**Յոբելեանական Յանձնախումբին**

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ
**Գերշն. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի**
Քահանայական Օծման եւ Ձեռնադրութեան 30 Ամեակի
Եպիսկոպոսական Օծման եւ Ձեռնադրութեան 20 Ամեակի
Յոբելեանական Հանդիսութիւն

- *Բանախօսութիւններ*
- *Գեղարուեստական Յայտագիր*
- *Տեսաերիզի Ցուցադրութիւն*
- *Հիւրասիրութիւն*

**Ուրբաթ, Յունիս 4, 2010, երեկոյեան ժամը 7:30-ին**

Առաջնորդարանի *«Արշակ եւ Էլիանոր Տիգրանեան»* Համալիրի
*«Նազարէթ եւ Սիմա Գալայճեան»* Սրահին մէջ
3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504

Հրաւէր

**ԼԻԲԱՆԱՆ**

## ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԵԾԱՐԷ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿԸ

*Ուրբաթ, 21 Մայիս 2010, երեկոյեան ժամը 8-ին, Հ.Կ.Մ.ի Արարատեան սրահին մէջ, ի ներկայութիւն պետական երեսփոխան ընկ. Սեպուհ Գալփաքեանի, Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի ատենապետ՝ ընկ. տոքթ. Մարտիկ Ժամկոչեանի, կրթական եւ մտաւորական ընտրանիի մը՝ տեղի ունեցաւ Հայ Կնոջ Տարուան առթիւ, հայ կին կրթական մշակներու մեծարման գեղեցիկ հանդիսութիւն մը: Հանդիսութեան բացումը կատարեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետուհի ընկ.հի Անի Եփրեմեան, Դանիէլ Վարուժանի «Ցան» քերթուածով, որմէ ետք յանուն Նոր Սերունդ Մշակութային Միութեան ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ երախտագիտական ջերմ խօսքեր ուղղեց երկար տարիներու ծառայութիւն մատուցած կրթական մշակներուն: Ան իր խօսքին մէջ ըսաւ յատկապէս.- «Բարձրացի՛ր մղումովդ, աշխատանքովդ ու արժանավայելօրէն, բայց նաեւ բարձրացո՛ւր նորահասները, նո՛ր սերունդը, հա՛յ սերունդը, հայութիւնն ու մարդկութիւնը: Ահա թէ ինչպիսի մաքառումով, նպատակադրումով ու երազներով մեր այսօրուան կրթական մշակները գործեցին: Վեթերան մեր մշակներու յանձնառութեան ոգին, աշխատասիրութեան թափը, գիտութիւնը եւ յառաջդիմութիւնը կարեւորելու գիտակցութիւնը ներշնչած են ու պիտի ներշնչեն ապահովաբար բաւական հոգիներ»:*

*Այնուհետեւ, Դալար Եագուպեան (դաշնակ) եւ Լոռի Եագուպեան (սրինգ) կատարեցին նուագ մը, որմէ ետք ելոյթ ունեցաւ Ն.Ս.Մ.Միութեան մանկապատանեկան պարախումբը: Տիկին Գարմէն Աճեմեան ապրումով մեներգեց «Ճան անուշ մայրիկ» եւ «Տէր Աստուած երգերը»:*

*Միութեան ատենապետուհի Անի Եփրեմեան ամփոփ կէտերու մէջ ներկայացուց մեծարեալ հինգ կրթական մշակները եւ անոնց ազգային, կրթական հասարակական վաստակը:*

*Ապաբեմ հրաւիրուեցան պետական երեսփոխան ընկ. Սեպուհ Գալփաքեան եւ Գերյարգելի Հայր Անդրանիկ Ծ.Վ. Կռանեան, որպէսզի մեծարեալներուն յանձնեն յուշանուէրները:*

*Յուշանուէրներու տուչութեան խանդավառ մթնոլորտին տակ՝ իւրաքանչիւր մեծարեալ փոխանցեց իր սրտի խօսքը: Յատուկ խօսք առաւ Հայ Աւետարանական Էշրէֆիէի Կեդրոնական Բարձրագոյն վարժարանի տնօրէնուհի Մարալ Տէյիրմէնճեան, եւ այս առիթով ընթերցեց վարժարանի Միացեալ Նահանգներու մէջ գործող շրջանաւարտիցի երախտագիտութեան խօսքը յղուած Սօնա Նաշեանին:*

*Ն.Ս.Մ.Միութեան մանկապատանեկան պարախումբին ելոյթով եւ պատշաճ հիւրասիրութեամբ իր աւարտին հասաւ այս գնահատելի եւ իւրայատուկ ձեռնարկը:*

### ԼՈՒՍԻՆ ԹԱՊԱՔԵԱՆ

*1962-2002 թուականներուն պաշտօնավարած է Հ.Բ.Ը.Մ.ի Լեւոն Կ. Նազարեան վարժարանէն ներս (հիմնադրութեան օրէն ի վեր), դասաւանդելով հայոց լեզու, պատմութիւն եւ Հայ եկեղեցւոյ պատմութիւն: Երկու անգամ պարգեւատրուած է Հ.Բ.Ը.Միութեան կողմէ որպէս վաստակաւոր ուսուցչուհի (25 ամեակին եւ ապա՝ 30-էն աւելի տարիներ վաստակ ունենալուն): 1993-ին, այլ հայ ուսուցիչներու շարքին, արժանացած է նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Քէշիշեանի այն ատեն Սրբազան առաջնորդ Լիբանանահայոց Թեմի «Գիր Օրհնութեան եւ Գնահատանքի»: Երկու անգամ պարգեւատրուած է որպէս Հ.Բ.Ը.Միութեան վեթերան անդամուհի:*

*Հեղինակն է «Անվերադարձ ճանապարհ» գիրքին:*

### ՄԱՔՐՈՒՀԻ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

*Ուսանողական շրջանին իսկ իր միակ երազը եղած է նուիրուիլ ուսուցչական ասպարէզին: Հետեւաբար, 15 տարիներ պաշտօնավարած է Պէյրութի Նոր Հաճըն Թաղի Ազգային Սահակ-Մեսրոպեան վարժարանէն ներս՝ որպէս նախակրթարանի դասատու:*

*Ամուսնութեան հետեւանքով՝ կարճատեւ շրջան մը ուսուցչական ասպարէզէն հեռանալէ ետք, կրկին կը վերադառնայ մանկավարժութեան (1964), այս անգամ՝ կը ներգրաւուի Ազգային Ռուբինեան Վարժարանէն ներս, որուն տնօրէնուհիի պաշտօնը ձեռնհասօրէն կը վարէ 1988 թուականին: Արդարեւ, վերջին տարիներուն, հակառակ Լիբանանի քաղաքական եւ տնտեսական խիստ տագնապալի վիճակին, Մաքրուհի Խաչատուրեան կրցաւ իր դպրոցը պահել կրթական եւ բարոյական բարձր մակարդակի վրայ: Իր օրով՝ Ազգային Ռուբինեան վարժարանը առաւել եւս ծաղկեցաւ ու բարգաւաճեցաւ, նաեւ կրօնաբարոյական եւ մշակութային բնագաւառներէն ներս: Տիկին Մաքրուհի Խաչատուրեանի եւ իր գլխաւորած ուսուցչակազմին մասին գնահատանքով կ՚արտայայտուին ոչ միայն ծնողներն ու հոգաբարձուները, այլեւ՝ Լիբանանահայ մամուլն ու ազգային իշխանութիւնները:*

*1993-ին, տիկին Մաքրուհի Խաչատուրեան հանգստեան կոչուելով կը հեռանայ ուսուցչական ասպարէզէն իր բեղուն վաստակին համար՝ որպէս կրթական մշակ, Արամ Ա. Վեհափառը, որ այդ օրերուն Լիբանանի Թեմի առաջնորդն էր, զինք կը պարգեւատրէ օրհնագիր-գնահատագիրով:*

*Բազմաբովանդակ է Մաքրուհի Խաչատուրեանի կեանքը: Մանկավարժութեան առընթեր ան գործնական աջակցութիւն բերած է նաեւ կանանց տարբեր կազմակերպութիւններէն ներս:*

### ԶՈՒԱՐԹ ՆԱՃԱՐԵԱՆ

*- Աշխատանքի ասպարէզ մուտք գործած է որպէս մանկապարտիզպանուհի Նոր Բարձրագոյն Վարժարանի՝ Լոնտոնի եւ Սկովտիոյ մէջ հետեւելէ ետք Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան կողմէ կազմակերպուած որակաւորման դասընթացքներու:*

*- Եղած է U.S. CATHOLIC*

*Շար.ը էջ 18*

## ԱԶԱՏՈՒՀԻ ՍԻՄՈՆԵԱՆ-ԳԱԼԱՅՃԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՇՔԱՆՇԱՆՈՎ



*Լիբանանահայ մամուլէն ուրախութեամբ իմացանք որ վաստակաշատ մանկավարժուհի եւ սփիւռքահայ ծանօթ մտաւորականուհի Ազատուհի Սիմոնեան-Գալայճեան Մայիս 7-ին, Պէյրութի Հայկազեան Գոլէճին մէջ տեղի ունեցած մեծարանքի հանդիսութեան մը ընթացքին պարգեւատրուած է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:*

*Հանդիսութեան ներկայ գտնուած են Լիբանանի Հայոց Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան, պետական նախարար եւ երեսփոխան Ժան Օղասապեան պետական երեսփոխաններ՝ Սեպուհ Գալփաքեան, մեթր Սերժ Թուրսարգիսեան, Յակոբ Բագրատունի, նախկին պետական երեսփոխան տոքթ. Եղիկ Ճէրէճեան, Հայկազեան Համալսարանի նախագահ դոկտ. վեր. Փօլ Հայտօսթեան եւ արուեստագէտներ: Այս առթիւ դրուատալից ելոյթներով հանդէս եկած են Հայ Աւետ. Գոլէճի տնօրէն Դոկտ. Զաւէն Մսրլեան, Հայկազեան գոլէճէն Դոկտ. Արտա Էքմէքճի եւ Լիբանանի ամերիկեան համալսարանէն՝ Սամիրա Աղասի:*

*Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդը կարդալէ ետք Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի կոնդակը՝ Ազատուհի Սիմոնեան-Գալայճեանը պարգեւատրած է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, առ ի գնահատանք իր ունեցած մեծ ներդրումին հայ մշակոյթին մարդակերտումի եւ հայակերտումի իր աշխատանքներուն:*

*Հանդիսութեան աւարտին Ազատուհի Սիմոնեան-Գալայճեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց որոնք զօրակցեցան ու թիկունք կանգնեցան իր տարիներու գործունէութեան եւ ձեռքբերումներուն:*



# Massis Weekly

**Volume 30, No. 19** **Saturday, May 29, 2010**

## European Parliament Adopts a Resolution Calling on Armenia to Pull Out Its Troops From "Occupied Territories of Azerbaijan"

BRUSSELS -- The European Parliament has adopted a resolution on the South Caucusus (2216) calling on Armenia to pull out its troops from the "occupied territories of Azerbaijan".

The non-binding resolution adopted by the EU legislature last Thursday does not specify whether the Armenian side should pull out of only Azerbaijani districts surrounding Karabakh or the region as well. It only rejects the notion that "Nagorno-Karabakh includes all occupied Azerbaijani lands surrounding Nagorno-Karabakh."

Nor does the resolution, drafted by Bulgarian Socialist lawmaker Evgeni Kirilov, explain whether the Armenian troop pullout should start immediately and unconditionally or after the signing of a comprehensive Armenian-Azerbaijani agreement. The latter condition is a key element of the so-called Madrid Principles of settling conflict that have been proposed the U.S., Russian and French mediators co-chairing the OSCE Minsk Group.

The European Parliament did make clear that it supports the Madrid document and the mediators' efforts to have it accepted by the conflicting parties. The proposed framework accord calls for the "liberation" of virtually all Armenian-controlled territories around Karabakh in return for a future referendum on self-determination in the territory itself.



In what appears to be a message primarily addressed to Azerbaijan, the resolution also says the EU legislature "condemns the idea of a military solution" to the dispute. It further stresses that "the Armenia-Turkey rapprochement and the OSCE Minsk Group negotiations are separate processes that should move forward along their own rationales."

Opposition leaders described the European Parliament resolution as pro-Azerbaijani, blaming the Sarkisian administration for it. Levon Zurabian, a leader of the opposition Armenian National Congress (HAK), charged that the document's passage was a "disgraceful defeat" for Armenian diplomacy.

*Հայերի ցեղասպանութեան յուշարձաններ են կառուցուած աշխարհի բազմաթիւ երկրներում, որոնց շատերի կառավարութիւնները ճանաչել են Հայերի Ցեղասպանութիւնը եւ ամէն տարուայ Ապրիլի 24-ին հայ ժողովրդի հետ հաւաքուելով այդ յուշարձանների շուրջ իրենց տուրքն են մատուցում նահատակների յիշատակին, աջակցում Հայերի ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացին, կոչ անում Թուրքիայի հանրապետութեանը ճանաչելու այն՝ որպէս իր նախորդի կատարած մեծագոյն յանցագործութիւններից մէկը մարդկութեան հանդէպ: Պոլսի Սկուտար թաղամասում եւս կա Հայերի ցեղասպանութեան նուիրուած յուշարձան, որը կոչւում է «Նահատակաց յուշարձան»: Հայերի Ցեղասպանութեան միջազգային ու Թուրքիայի կողմից ճանաչումը ժամանակի հարց է, միայն թէ Հայաստանը խոհեմ դիւանագիտութիւն վարի ու չթուլացնի դիրքերը արտաքին ճնշումների տակ...:*

*Լրատուամիջոցը հզօր զէնք է: Այսօր հայերս հպարտանում ենք հայկական այն հեռուստա-ծրագրերով, անկախ նրանց քաղաքական թեքումից, որոնք սփռւում են աշխարհով մէկ, իսկ ARTNSHANT-ը 6 ժամ եւ USArmenia-ն 24 ժամ ձրի են սփռւում Ամերիկայում:*

*Հեռուստածրագրերի դերը շատ մեծ է ոչ միայն հայերին ու Հայերի Ցեղասպանութիւնը պրոպագանդելու գործում ամբողջ աշխարհով մէկ, այլ նաեւ Հայաստանը մօտիկից ծանօթացնելու աշխարհին իր արուեստով, հին մշակոյթով ու հիւրասէր հայ ժողովրդով, միաժամանակ սատարել հայապահպանման գործընթացին. հայ երեխան Ամերիկայում կամ այլ երկրներում հիմնականում պետական դպրոց է յաճախում եւ հայերէն գրել-կարդալ չգիտի, բայց երբ ծնողները նրա ներկայութեամբ դիտում են հայկական հեռուստածրագիր, անկախ իր կամքից նա մի հայեացք գցում է էկրանի վրայ եւ կամաց-կամաց յաճախակի դարձնում այդ ու սատարում հայապահպանման գործընթացին, քանի որ ծանօթանում է իր հայրենիքի հետ, հայի նիստուկացին Հայաստանում ու հետաքրքրութիւն ցուցաբերում նրա նկատմամբ: Գնահատում ենք բոլոր այն հեռուստածրագրերի աշխատանքները, որոնք սատարում են հայապահպանմանը եւ զօրակցում հայրենիքին:*

*Համալսարանների հայ ուսանողները, որոնցից շատերը հայերէն գրել-կարդալ չգիտեն, Լոս Անճելեսում իրենց ստեղծած Միացեալ հայ երիտասարդաց միութիւնով հսկայական աշխատանք են կատարում ամուր պահելու հայի ինքնութիւնը եւ նպաստում են հայերի արդար պայքարին իրենց իրաւունքների համար: Ամէն տարի միայն Ապրիլի 24-ին նրանց կազմակերպած «բողոք քայլարշաւին» Հոլիվուտի «Little Armenia»-ում մասնակցում են տասնեակ հազարաւոր հայեր:*

*Հայերի Ցեղասպանութեան 95-րդ տարելիցը յատկանշական է երկու իրադարձութիւններով.*

*1. Հակառակ Թուրքիայի թափած ջանքերին, իր թոյլ տուած սխալների պատճառով յաճախ նա նպաստում է հայերի ցեղասպանութեան միջազգային ճանաչմանը: Միւս կողմից ակտիւութիւն է նկատւում տարբեր երկրների Հայերի ցեղասպանութեան ճանաչման գործում, հակառակ ցիւրիխեան արձանագրութիւնների աննպաստ լինելուն Հայաստանի համար: Թուրքիայում եւս թուրք քաղաքացիների կողմից փորձեր են արւում նշելու 1915 թ. Հայերի Ցեղասպանութեան տարելիցը:*

*2. Ցիւրիխեան արձանագրութիւնների միջազգային արձագանքներով, քանի որ Թուրքիան հաւատարիմ չմնաց իր ստորագրութեան եւ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների բարելաւումը պայմանաւորեց արձանագրութիւններում գոյութիւն չունեցող Արցախի հակամարտութեան լուծման հետ յօգուտ Ատրպէյճանի: Այդ պատճառով նա թիրախ դարձաւ միջազգային մամուլի քննադատութիւններին եւ ժամանակաւորապէս նպաստեց Հայաստանի միջազգային հեղինակութեան բարձրացմանը (ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի օգնութեամբ), մանաւանդ, երբ Ապրիլի 22-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը կասեցրեց դրանց քննարկումը Ազգային ժողովի քառօրեայ նիստում: Նա վերջապէս հասկացաւ նաեւ, որ Հա-*

*Շար.ը էջ 15*

# ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

*Շարունակուած էջ 14-էն*

*ների ցեղասպանութիւնը բազմաթիւ փաստերով հաստատուած իրողութիւն է ոչ միայն հայերի, այլ նաեւ միջազգային ցեղասպանագէտների կողմից եւ ցանկացած յանձնախմբի քննարկման ենթակայ չէ:*

*Սակայն հայերի համար դրանց կասեցումը որեւէ նշանակութիւն չունի, քանի որ ակտիւ վիճակում են եւ գերտէրութիւնների միջամտութեամբ ամէն րոպէ կարող են շահարկուել Թուրքիայի կողմից, որի արդիւնքում Հայաստանը ընդունելով Թուրքիայի հետ ունեցած ներկայ սահմանները, հայերը կը կորցնեն իրենց բնօրրանները եւ կը թաղուի* պահանջատիրութիւնը:

*Աւելին, ՀՀ-ի նախագահ Սերժ Սարգսեանը արդէն պատրաստւում է Ատրպէյճանին յանձնել Արցախի շուրջ ստեղծուած անվտանգութեան գօտու տարածքները: Սիրիայում, Սիրիական «Al Watan» թերթին տուած հարցազրոյցում նա ասել է. «... Երբ Ղարաբաղի ժողովուրդը ստանայ իր ինքնորոշման իրաւունքն իրագործելու իրական հնարաւորութիւն եւ ստեղծուեն անվտանգութեան եւ զարգացման գործնական մեխանիզմներ, հայկական կողմի փոխզիջում կարող է դիտուել Ղարաբաղի շուրջ գտնուող այդ շրջանների վերադարձն Ատրպէյճանին՝ իհարկէ պահպանելով լեռնային Ղարաբաղն ու Հայաստանը կապող միջանցքը...» (տե՛ս Սերժ Սարգսեան. «Հայկական կողմի փոխզիջում կարող է դիտուել Ղարաբաղի շուրջ գտնուող շրջանների վերադարձն Ատրպէյճանին՝ պահպանելով Հայաստանը Ղարաբաղին կապող միջանցքը», «Նոր Հայաստան», Հինգշ., Մարտ 25, 2010, էջ 13): Ստացւում է, որ փաստօրէն Ղարաբաղի հակամարտութեան հարցն անտեսանելի թելով կապուած է արձանագրութիւնների հետ եւ Հայաստանն ակամայ կազմում է դրա օղակներից մէկը, որին արդէն համաձայն է Հայաստանի նախագահը, եւ միայն դրա լուծումից յետոյ կ՚իրագործուի արձանագրութիւնների վաւերացումը: Ահա, թէ ինչ ծուղակ է պատրաստւում Հայաստանի համար: Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքի հարցի լուծումը ապագային թողնելը, նշանակում է Աստծոյ կամեցողութեան յոյսին թողնել, որը շատ վտանգաւոր է՝ կախուած բազմաթիւ չնախատեսուած հանգամանքներից: Համայն հայութեան իղձն է անկախ կամ Հայաստանին միացած տեսնել Ղարաբաղը եւ որքան շուտ, այնքան լաւ, ուստի Հայաստանը պէտք է իր ամբողջ ուժերը կենտրոնացնի առաջին հերթին այդ հարցը լուծելու վրայ...:*

*Ինչպէս ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի առաջին այցելութեան ժամանակ սփիւռք, սփիւռքը դժգոհ ընդունեց նրան, քանի որ դէմ էր արձանագրութիւններին, այնպէս էլ հիմա նա դէմ է դրանց եւ դիմում է ամէն միջոցի դրանցից ազատուելու համար, որոնք միայն փորձանք կը բերեն հայ ժողովրդի գլխին: Եթէ ՀՀ Նախագահը իրօք ուզում է պահպանել մեր բնօրրանները, ապա նա պէտք է կուռ միասնութիւն ստեղծի սփիւռքի հետ ու շուտափոյթ վերականգնի ու հզօրացնի Հայաստանի տնտեսութիւնը՝ ետ քաշելով իր ստորագրութիւնը արձանագրութիւններից, որը սփիւռքի մեծամասնութեան հիմնաւորուած ու արդար պահանջն է:*

*Այստեղ պէտք է նկատի ունենալ մի հանգամանք եւս. Սփիւռքի Նախարարութեան ստեղծումը Հայաստանում դրական երեւոյթ է կապերն ամրապնդելու համար սփիւռքի հետ: Սակայն նա կանգնած է դժուարութեան առջեւ, քանի որ սփիւռքում միասնական կարգաւորող ղեկավար մարմին (գլուխ) գոյութիւն չունի եւ նա պէտք է կուսակցութիւնների, յարանուանութիւնների ու բազմաթիւ կազմակերպութիւնների հետ շփուի, որոնց բոլորի հետ առանձին-առանձին դժուար է ընդհանուր յայտարարի գալ, ինչպէս եղաւ ՀՀ Նախագահի այցելութեան ժամանակ: Քանի որ սփիւռքը եւս շահագրգռուած է սերտ յարաբերութիւններ ստեղծել հայրենիքի հետ, նա պէտք է արդէն գոյութիւն ունեցող Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամեանի հետ ձեռնամուխ լինի այդ կառոյցի ամբողջացմանն ու ենթակառոյցների ստեղծմանը բոլոր հայ գաղթօճախներում՝ վերջ տալով գոյութիւն ունեցող ներքին երկպառակութիւններին: Այդ կառոյցն իր մասնաճիւղերով կը նպաստի աւելի հեշտ լուծել Հայաստանի եւ սփիւռքի միջեւ գոյութիւն ունեցող հարցերը: Իսկ Սփիւռքի Նախարարութեան առաջ քաշած հայրենադարձութեան ծրագիրը շատ լուրջ է: Մի բան ակնյայտ է: 1946-47 թթ. նման հայրենադարձութիւն հնարաւոր չէ իրականացնել մեր օրերում, որը կապուած էր կոտորածից ազատուած հայերի իղձերի իրականացման հետ՝ հզօր Խորհրդային Միութեան միջոցով վերադարձնել մեր բնօրրանները, այնտեղ ապրելու յոյսով: Սփիւռքում այսօր 1915 թ. Ցեղասպանութիւնից ազատուածներից նոր սերունդ է գոյանում, որն ապրելով բարեկեցիկ կեանքով ապրելակերպի բարձր մակարդակ ունեցող շատ երկրներում, որտեղ գերակայող օրէնքները պարտադիր են, իսկ դրանք խախտողները խստիւ պատժւում են, իր կեանքը կապում է այդ երկրներում ունեցած յաջողութիւնների հետ գիտական, գործարար, իրաւական, բժշկական եւ այլ ոլորտներում՝ ազնուօրէն ծառայելով ու կանոնաւոր կերպով վճարելով եկամտահարկերը: Դժբախտաբար այսօր Հայաստանում ապրելակերպի մակարդակն այնքան ցածր է, որ ժողովուրդը հեռանում է այնտեղից փոքր հնարաւորութեան դէպքում: Ուրեմն նախ պէտք է ապահովել հայրենի ժողովրդի տնտեսական վիճակը, որպէսզի նա ամուր կառչի իր հողին, որից յետոյ մտածել հայրենադարձութեան մասին: Երկրորդ՝ սփիւռքում իր գերդաստանով խոր արմատ գցած հայը չի կարող իրականացնել իր ամբողջ գերդաստանի վերադարձը Հայաստան, որը կապուած է բազմաթիւ հարցերի հետ: Մասնաւոր հայրենադարձութիւն հնարաւոր է տարբեր շփումների միջոցով՝ սփիւռքի դպրոցականների այցելութեամբ հայրենիք, Երեւանում կազմակերպելով տարբեր փառատօներ, սպորտային միջոցառումներ եւ այլն, եթէ Հայաստանում գործի իրաւական դաշտն ու վերանան թալանը, կոռուպցիան ու վախի գործօնը սփիւռքահայի նկատմամբ (որոնց տենչում է նաեւ հայրենի ժողովուրդը): Այն ժամանակ սփիւռքահայ գործարարը եւս կը գնա Հայաստանում գործ կը դնի, որոշ ժամանակ անց, համոզուելուց յետոյ, որ իր գործն ու անվտանգութիւնն ապահովուած է, ընտանիքին էլ կը տեղափոխի Հայաստան:*

*Եթէ Թուրքիան անկեղծօրէն ուզում է յարաբերութիւնները բարելաւել Հայաստանի հետ, ապա նա*

*ա) անօրէն փակած սահմանը պէտք է բանայ՝ առանց պայմաններ պարտադրելու Հայաստանին,*

*բ) իր ժողովրդին յայտնի ճշմարտութիւնը Հայերի Ցեղասպանութեան մասին,*

*գ) չեղեալ յայտարարի սահմանադրութեան 301 յօդուածը,*

*դ) վերջ տայ նոր սերնդի մէջ հայերի նկատմամբ ատելութիւն սերմանելուն ու ուղեղի լուացման, թէ հայերն են կոտորել թուրքերին ու կեղծ յուշարձաններ կանգնեցնի այդ նպատակով,*

*ե) նոր սերնդին նախապատրաստի հասկանալու ողջ ճշմարտութիւնը, որի համար պէտք է ոչնչացնի գոյութիւն ունեցող Հայերի Ցեղասպանութեան ուրացումով ուռճացուած դպրոցական դասագրքերը, հրատարակի նոր դասագրքեր՝ իրերը կոչելով իրենց անուններով,*

*զ) ընդունի իր նախորդի մեղքերը, ճանաչի Հայերի Ցեղասպանութիւնը եւ հատուցի նրանց հասցրած բոլոր վնասների համար...:*

*Նկատի պէտք է ունենալ նաեւ այն հանգամանքը, որ Թուրքիայի Եւրոմիութեան անդամ դառնալու ձգտման հետեւանքով որոշ չափով մեղմացում է նկատւում ներքին քաղաքականութիւնում եւ մարդիկ քիչ թէ շատ կարողանում են ազատ արտայայտել իրենց կարծիքը, որի հետեւանքով 1915 թ. հայ պարմանուհիների հետ պարտադրուած ամուսնութիւններից առաջացած խառնածին նոր սերնդի որոշ ներկայացուցիչներ ձգտում են իրենց արմատներին՝ իրենց ազգութիւնը եւ անունները փոխելով, որը կարծում ենք յետագայում մեծ ծաւալ կը ստանայ...:*

*Կրկնելով նշենք, որ Թուրքիան վաղ թէ ուշ ընդունելու է Հայերի Ցեղասպանութիւնը: Նա իր ժողովրդին չի կարող երկար «կերակրել» սուտ ուրացումներով, մանաւանդ, որ այսօր նոր սերնդի մէջ սկսել է թափանցել սթափ դատողութիւնը եւ նա իրօք ձգտում է իմանալ ճշմարտութիւնը 1915-ին հայերին պատահածի մասին:*

*Այս կապակցութեամբ ողջունելի է, որ Հայերի ցեղասպանութեան 95-րդ տարելիցի առթիւ, առաջին անգամ լինելով,* Insan Haklari Dernegi Իրաւապաշտպան կազմակերպութիւնը ոստիկանների թոյլտուութեամբ, թուրք մտաւորականների կէսժամեայ հանրահաւաք է կազմակերպել Ստամբուլի Թաքսիմ կենտրոնական հրապարակում «Այլեւս երբեք» կարգախօսով՝ նուիրուած 1915-ի Հայերի ցեղասպանութեանը՝ յարգելու համար զոհերի յիշատակը:

«Իրաւունքները ոտնահարուածների Սոցիալիստական պլատֆորմ» հասարակական կազմակերպութեան ներկայացուցիչները հաւաքուել են Ստամբուլի Շիշլի թաղամասում «Ակօս» շաբաթաթերթի խմբագրատան առջեւ, ծաղիկներ են դրել խմբագրատան մուտքի առջեւ եւ դատապարտել 1915 թ. Օսմանեան պետութեան իրականացրած ոճիրը հայերի դէմ:

Հայերի ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած միջոցառում է տեղի ունեցել նաեւ Ստամբուլի Բէյօղլու թաղամասում:

Մարդու իրաւունքների պաշտպանութեան միութեան Ստամբուլի մասնաճիւղի ներկայացուցիչները նստացոյց են կազմակերպել Գալաթասարայի լիսէի մօտ՝ պարզելով Ապրիլի 24-ին սպանուած հայ մտաւորականների նկարները: Իրենց տարածած յայտարարութեան մէջ կազմակերպիչները նշել են, որ ոմանց քանտեր տարան, որից յետոյ Հայդարփաշայի կայարանում գնացքներ նստեցրին եւ տարբեր ուղղութիւններով տարան: Նրանցից 81-ին սպանեցին, 139-ի մասին որեւէ տեղեկութիւն չկայ: Պէտք է ներողութիւն խնդրել նրանց հարազատներից, հաշուի նստել սեփական պատ-

*Շար.ը էջ 18*




# ՈՎՔԵՐ ԵՆ ԱՍՈՐԻՆԵՐԸ

Խմբագրութեան հարցերին պատասխանում են «ԱՍՈՐԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ֆիլմի հեղինակները

*Ո՞ւր են տանում ճանապարհները քարաւանին, եթէ ձգւում են միայն մէկ ուղղութեամբ: Ի՞նչ են զգում ճանապարհները, երբ հասկանում են, որ վերադարձողներ այլեւս չեն լինելու, որ իրենց խարկուած հողը այլեւս չի տրորվելու ետ եկողների ոտքերի տակ...*

*Պատկերը մեր ու մեր անցեալի մասին ասես լինի, բայց այս անգամ քարաւանով մէկ ուղղութեամբ գնացողը ասորիներն են՝ Միջագէտքի երբեմնի հզօր տէրերը:*

*Նրանց քարաւանում առջեւից գնում են բարձած ուղտեր, ետեւից՝ հասուն այրեր, կին ու մանուկ՝ որը չուստ-տրեխով, որը՝ ոտաբոպիկ: Պատկերը սրտաճմլիկ է, եւ սրտաճմլիկ է երգը, որ էկրանից ներծծւում է մարդու հոգու մէջ, աւելի թանձրացնում մէկ ուղղութեան տխուր գիտակցումը:*

*Ո՞ւր են գնում ասորիները:*

*Հարցը պատասխան ունի՝ շարունակում են ցրուել աշխարհով մէկ: Բայց ֆիլմի հեղինակները գիտեն նաեւ մի հետաքրքիր հանգրուանի տեղ, եւ այդ հանգրուանը Հայաստանն է:*

*Այսպիսով, ՀՀ մշակոյթի նախարարութեան պատուէրով նկարահանուած «Ասորիները Հայաստանում» ֆիլմը մի հանգրուանի մասին է, ուր 1820-ականներին կանգ է առել քարաւանի մի հատուածը եւ 190 տարի շարունակ ապրում է այս երկնքի տակ:*

*Ինչպէ՞ս է ապրում, ի՞նչ լեզուով է խօսում, ինչպէ՞ս է աղօթում եւ տօնում իր տօները, ի՞նչ չորեր է հագնում, ի՞նչ է սիրում ուտել: Մանրամասները հետաքրքիր են թէ՛ սովորական դիտողի, թէ՛ ազգագրագէտի համար, եւ կինոնկարը փորձում է պատասխանել շատ հարցերի:*

*Ֆիլմի նախագծի եւ սցենարի հեղինակ, բանասիրական գիտութիւնների թեկնածու Արմէնուհի Դեմիրճեանը պատմում է.*

*- Իբրեւ գրականագէտ եւ, ընդհանրապէս, իբրեւ հայ մարդ՝ մշտապէս խոր երախտիք եմ զգացել երկու մեծ ասորիների՝ Մար Աբաս Կատինայի եւ Դանիէլ եպիսկոպոսի հանդէպ, որովհետեւ Կատինայի մեհենական մատեանների քննութեամբ է Խորենացին շարադրել մեր ազգի պատմութիւնը, իսկ Դանիէլ եպիսկոպոսը այն մարդն էր, որ պահած տեղից Վռամշապուհ արքային յանձնեց հայոց նշանագրերը, եւ փաստօրէն, դրանց հիման վրայ, թէ դրանք հերքելու համար մենք ունեցանք մեսրոպեան այբուբենը: Մշտապղէս մտածել եմ, որքան անպարփակ է եղել այս մեծ հոգիների բարութեան եւ կարեւորի գիտակցման սահմանը, որ մի կողմ թողած ազգային բախում, հին ու նոր թշնամութիւն՝ կարողացել են գնահատել իրական արժէքները եւ իրենց կողմից մեզ յանձնել մեր կորցրածը: Այս երախտիքը իմ մէջ թանձրացել է նաեւ Սարոյեանի «Եօթնասուն հազար ասորի», Կապուտիեանի «Ասորուհին» կարդալուց յետոյ, սակայն, միեւնոյն է, մինչեւ ՀՀ մշակոյթի նախարարութեան ծրագրերերով նրանց արուեստով զբաղուելը եւ ազգի ներկայացուցիչների հետ գործունէութիւն ծաւալելը լաւ չեմ պատկերացրել, թէ ովքեր են ասորիները:*

*Շարունակելով սցենարիստի խօսքը՝ ֆիլմի ռեժիսոր, ծագումով ասորի, ՀՀ վաստակաւոր արտիստ Ռազմիկ Խոսրոեւն աւելացնում է.*

*- Յաճախ եմ լսել, որ հարցնեն՝ ասորիներն ի՞նչ դաւանանք ունեն, եւ տեսել եմ շատերի զարմանքը, երբ իմացել են, որ քրիստոնեայ ենք: Տեսել եմ նաեւ շատերի շփոթմունքը, երբ լսել են, որ հին ասորերէնով է խօսել ինքը՝ Յիսուս Քրիստոսը:*

*Մի խօսքով, ֆիլմը Հայաստանի ասորիների մասին պատմելուց բացի պիտի պատասխան տար այլեւայլ հարցերի, այդ իսկ պատճառով որոշեցինք պատմութիւնը սկսել որքան հնարաւոր է հնից:*

*Հին ասելով՝ հեղինակները, փաստօրէն, մատնանշում են մարդկային քաղաքակրթութեան արշալոյսը եւ Նինուէի աւերակներով ու աշխարհի լաւագոյն թանգարաններում պահուող նմուշներով ցոյց տալիս ասորաբաբելական ճարտարապետութեան մնացորդները՝ թեւաւոր ցուլերի քաղաքը, Իշտարի ամրոցի դարպասը, արձաններ, կոթողներ, մարտակառքերի հարթաքանդակներ, որոնցով ժամանակին հիացել է Ալեքսանդր Մակեդոնացին: Այնուհետեւ ներկայացւում են ասորիների կողմից մարդկութեանը ժառանգուած, այժմ Լուվրում պահուող սեպագիր յուշարձաններ,*

*Համուրապի օրէնսգրքի քարէ արձանագրութիւնները, աշխարհում առաջին գրադարանի տէր, թագաւոր Աշուր Բանիպալի արձանը, ապա աշխարհի եօթ հրաշալիքներից մէկի՝ Շամիրամի կախովի այգիների նորովի պատկերը եւ, իհարկէ, «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» առասպելը:*

*Ֆիլմի ճանաչողական դաշտն աւելի է ընդլայնւում, երբ խօսւում է ասորիների մարդաբանական տեսակի եւ լեզուական ու գրային առանձնայատկութիւնների մասին՝ դիտողին տեղեկացնելով, որ սեմական ծագմամբ այս ազգը արտաքինից այսօր աւելի նման է հնդեւրոպացիներիս, քան իրենց ազգակից ղպտիներին ու արաբներին, եւ ասուածը բազմիցս փաստւում է գունագեղ կադրերով:*

*- Երբ նկարահանող խմբով ճանապարհ ընկանք դէպի ասորաբնակ վայրեր՝ Արարատի Դիմիտրով, Դուին, ապա Կոտայքի Արզնի գիւղ, արդէն յստակ պատկերացնում էինք շատ բան, բայց տեղում տեսածն ուրիշ էր: Մեզ դիմաւորեց գեղեցկատես ու բարեձեւ արտաքինով մի ազգ, որ աչքի ընկաւ նաեւ կազմակերպուած ապրելու, ուսման հանդէպ մշակուած վերաբերմունք ունենալու վարքագծով: Տեսանք հետաքրքիր մտաւորականների եւ յատկապէս հիացանք ՀՀ վաստակաւոր ուսուցչուհի Տախսիա Մուրադովայի աշխատանքով, որն սկսած 1971 թ.-ից, հարազատ Դիմիտրովում կազմակերպել է ասորերէնի դասաւանդում, ապա եւ ստեղծել դասագրքեր, որոնք հաստատուել են ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան կողմից եւ տպագրուել պետութեան միջոցներով,- ասում է Ա. Դեմիրճեանը:*

*Տօնական միջոցառումներից ֆիլմում ներկայացուած է ամէն տարի Դիմիտրովում Յուլիսի 27-*

*Շար.ը էջ 18*

# ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ՈՂՋ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԿԱՏԱԼՈԳՈՒՄ




*«Ամէն անգամ» երբ ես լսում եմ կամ կարդում եմ, որ կան մարդիկ, ովքեր կարծում են, թէ հայ կինօ չկայ, հայկական կինոն ընդամէնը 2-3 անուն է, խորը ցաւ եմ զգում եւ մտածում եմ, որ մարդիկ կամ չգիտեն, կամ դիտաւորեալ թիւրիմացութեան մէջ են գցում: Կարծում եմ, որ այս գիրքը շատ ծանրակշիռ արգումենտ է այդ մարդկանց դէմ, ովքեր այսուհետեւ կ'իմանան, թէ ինչ ահռելի ու հարուստ ժառանգութիւն ունենք մենք»,- յայտնեց Հայկական կինոյի կատալոգի գլխաւոր խմբագիր՝ Միքայէլ Ստամբուլցեանը՝ վերահրատարակուած կատալոգի շնորհանդէսի ժամանակ:*

*10 տարի առաջ հրատարակուած Հայկական կինոյի առաջին կատալոգը, որն ընդգրկում էր 1924-1998թթ-ին Հայաստանում ժապաւէնով նկարահանուած ֆիլմերը, այսօր վերահրատարակուել է: Ռուսաստանի կինոգիլդիայի «Սպիտակ փիղ» մրցանակին արժանացած կատալոգի վերահրատարակման աշխատանքներն իրականացուել են ՀՀ Մշակոյթի նախարարութիւնը, «ՎիւաՍել-ՄՏՍ» ընկերութիւնը, «Մէկ ազգ, Մէկ մշակոյթ» հիմնադրամի կողմից, իսկ կազմակերպչական ամբողջ աշխատանքը կատարուել է «Ոսկէ ծիրան» կինոփառատօնի աշխատակազմի կողմից:*

*Նշենք նաեւ, որ վերահրատարակուած կատալոգում ճշտուել են ֆիլմերի արտադրութեան տարեթուերը, տեւողութիւնը, մասնակիցների կազմը, ինչպէս նաեւ ընդգրկուել են մինչեւ օրս նկարահանուած տեսաժապաւէնով ֆիլմերը: Նոր հրատարակութեան մէջ ներառուել է նաեւ առանձին յաւելուած, որն ընդգրկում է 2009-ին արտադրուած խաղարկային ֆիլմերը:*

*Հարկ է նշել, որ կատալոգի համար աղբիւր են ծառայել դեռ 60-ականների սկզբին Դանիէլ Բզնունու կողմից հաւաքուած ֆիլմոգրաֆիան, ֆիլմերի մոնտաժային ամփոփագրերն ու տիտրերը, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միութեան եւ Կինոյի տան արխիւային նիւթերը, նաեւ Գրականութեան եւ արուեստի թանգարանում պահուող նիւթերը եւ այլն:*

# ՖՐԱՆՍԱՀԱՅ ՌԵԺԻՍՈՐԸ՝ ԿԱՆՆԻ ՓԱՌԱՏՕՆԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ



*Ֆրանսահայ ռեժիսոր Սերժ Աւետիքեանի «Շան պատմութիւնը» անիմացիոն ֆիլմը լաւագոյնն է ճանաչուել Կաննի 63-րդ կինոփառատօնում՝ կարճամետրաժ ֆիլմերի անուանակարգում: Ժիւրիի այս որոշումը հրապարակել է աշխահռչակ քանատահայ ռեժիսոր Ատոմ Էգոյեանը:*

*15 րոպէ տեւողութեամբ ֆիլմի իրադարձութիւնները ծաւալւում են ուղիղ մէկ դար առաջ՝ 1910 թուականին՝ Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքում: Նոր իշխանութեան եկած երիտթուրքերը դիմում են արեւմտեան պետութիւնների օգնութեանը՝ Կոնստանդնուպոլսի փողոցները 30 հազար թափառական շներից ազատելու համար: Կառավարութիւնը, ի վերջոյ, որոշում է հրաժարուել շների ոչնչացման աւանդական եղանակից՝ կենդանիներին պարզապէս տեղահանելով Պոլսի հարեւանութեամբ գտնուող անմարդաբնակ կղզիներից մէկը, որտեղ էլ շների մեծ մասը սովից ու ծարաւից սատկում է:*

*Քննադատներից շատերը նկատում են, որ այս ֆիլմի միջոցով Աւետիքեանը ալեգորիկ կերպով փորձել է ներկայացնել այն ճակատագիրը, որին արժանացան Օսմանեան կայսրութիւնում բնակուող կրօնական փոքրամասնութիւնները նախորդ դարասկզբին:*

*Կիրակի օրը «Ոսկէ արմաւենի» մրցանակը ստանալուց անմիջապէս յետոյ Սերժ Աւետիքեանը ասել է. - «Նախ եւ առաջ» ես ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել պատմութեանը: Ես տպաւորութիւն ունեմ, որ այս կինոնկարը նկարել եմ, որպէսզի չընդհատուի այն կապը, որ գոյութիւն ունի Անատոլիայում ծնուած հայ նախնիներիս եւ Փարիզում ապրող որդիներիս միջեւ: Աշխարհի ցանկացած ռեժիսոր ֆիլմ նկարահանելու իր գաղտնիքն ունի, եւ սա էլ հենց իմ գաղտնիքն էր»:*

*Ֆիլմի ստեղծմանը աջակցած ընկերութիւններ թւում է նաեւ Ստամպուլում գործող Anadolu Kultur հիմնադրամը, որի ներկայացուցիչ Օսման Կավալային Աւետիքեանը Կաննի փառատօնի փակման արարողութեան ժամանակ յատուկ շնորհակալութիւն յայտնեց:*

*Սերժ Աւետիքեանը ծնուել է 1955 թուականին Երեւանում, յետագայում ընտանիքով տեղափոխուել է Ֆրանսա:*

*Կաննի 63-րդ կինոփառատօնի պաշտօնական ծրագրում ընդգրկուած էր նաեւ լիբանանահայ ռեժիսոր Վաչէ Բուլղուրջեանի «Հինգերորդ զօրասիւն» ֆիլմը: Կինոնկարում տեղ գտած իրադարձութիւնները ծաւալւում են Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ՝ Պէյրութի հայաշատ Պուրճ Համմուտ թաղամասում: «Հինգերորդ զօրասիւն»-ը, սակայն, ժիւրիի որեւէ մրցանակի այդպէս էլ չարժանացաւ:*

# ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵՂԾ ԴԻՄԱԿՆԵՐԸ

*ՄԱՐԻԷԹ ՄԻՆԱՍԵԱՆ-ՕՀԱՆԷՍ*

*Մարդ արարածը յաճախ կը կարծէ թէ կարիքն ունի կեղծ դիմակներ հագուելու փոփոխակի գործողութեան, որ իրեն կարող կը դարձնէ «հանդիստ» ապրելու միջավայրի մը մէջ որ կը սնանի կեղծիքով, տգեղ գովասացութիւններով եւ յարատեւ սուտով, հագուելով յարմար դիմակը իւրաքանչիւր առիթի, ծածկելու համար իր իսկական բնութիւնը ըլլալով առօրեայ կեանքէն մաս մը:*

*Պարագաներու մէջ ժամանակներ կան որոնց փորձարականօրէն շատ դժուար է դիմագրաւել, որոնց մենք կը հակազդենք դիմակներ հագուելով, կամ սիրուն պատկեր մը ներկելով մեզի համար եւ ինչո՞ւ չէ..ուրիշներուն համար: Իսկապէս որ ասիկա վախազդու մակերես մըն է: Երբեմն տարիներ կ'անցնին նախքան մենք կը սկսինք ճանչնալ թէ մեր կեանքը, հաւատքը եւ տրամադրութիւնը ապականած են նիւթերով, մեր մեղաւոր հոգին՝ որուն վրայ կը փորձենք ներկել: Ներկի խաւերը կը սկսին մրոտիլ եւ նեխիլ, ապա կը դիտենք մենք մեր անձերուն եւ կը տեսնենք որ անոնք անճանաչելի դարձած են:*

*Զոր օրինակ, արդեօք մենք միշտ պէտք չե՞նք զգար ցաւ եւ վիշտ կեղծելու մեռեալի մը յուղարկաւորութեան ընթացքին, մանաւանդ երբ զօրաւոր կապ մը չ'ըլլայ մահացողին հետ: Կամ կեղծ դիմակ չե՞նք հագուիր պաշտպանելու մենք զմեզ վիրաւորուելէ եւ կամ ուրիշներու կողմէ մերժուելէ: Կամ կրնայ ըլլալ որ չենք սիրուիր ինչպէս որ ենք, հետեւաբար կը պահենք մենք զմեզ: Կեղծ դիմակ չե՞նք հագուիր արդեօք, երբ կը բամբասենք հարազատ մը կամ մտերիմ ընկեր մը եւ երբ տեսնենք զայն՝ «սիրալիր կ'ողջագուրուինք» իբրեւ թէ մենք չէինք բամբասող անձերը: Արդեօք ասոնք կեղծ դիմակներ չե՞ն որոնք մաս կը կազմեն մեր ապրելակերպին որոնցմէ չենք կրնար ձերբազատուիլ կարենալ ապրելու համար առանց տառապանքի, միջավայրի մը մէջ որ ճշմարիտ չէ եւ հաւատարիմ չէ իր զգացումները բացայայտօրէն արտայայտելու: Այս ձեւով ձգելով որ մեր դիմակը կամ կեղծ անձը կառավարէ մեր կեանքը:*

*Եթէ ճշմարիտ չըլլանք մենք մեր անձերուն հետ ապա ուրեմն մենք կ'ուրանանք մեր արտայայտութիւնը, մեր հոգին, նաեւ կ'ուրանանք այն լոյսը զոր կը բերենք աշխարհին: Մեզմէ իւրաքանչիւրը ոչ միայն պէտք է յայտնաբերէ եւ ընդունի իր եզակի յատկութիւնները, այլ՝ պէտք է բաժնեկցի զանոնք այլոց հետ: Այ՛ս է դարմանումը երբ մենք կը դպչինք իրարու սիրտ սրտի:*

*Սակայն ցաւալիօրէն վերոյիշեալ դիմակները եղած են պիտանի թթուածինը կեանքի յարատեւման: Եղած են մեր առօրեայ կեանքի պէտքերը, առանց որոնց չենք կրնար ապրիլ: Եւ աւելի ցաւալին այն է թէ, այս «փորձառութիւն»ը սկսած են մարդիկ փոխանցել իրենց զաւակներուն եւ թոռներուն, սեպելով զանոնք բարքեր եւ սովորութիւն*

## ԻՇԽԱՆԱՒՈՐ ՅԱՐՈՒՍՏ ՄԱՐԴԻԿ

ՍԵՐԳԷՅ ՇԱՀՆՈՒԲԱՐԵԱՆ

Իշխանաւոր հարուստ մարդիկ:
Այսօր դուք կաք, վաղը՝ «չկաք»:
Յարց չէ՞ք տալիս. «Ի՞նչ ենք անում...»:
Չէ՞ որ նոյնն է կեանքի վերջում...
Ձեզ պէս մարդիկ գալիս-գնում,
Յիշողութեան մէջ չեն մնում,
Թէ՞ կարծում էք՝ գերեզմանում
Արձաններն են կեանք վայելում:

Իշխանաւոր հարուստ մարդիկ:
Այսօր դուք կաք, վաղը՝ «չկաք»:
Բաւ չէ՞ արդեօք, որ դուք փոխուէք...
Ու սրտացաւ լուրջ մտածէք.
Յազար ու մի բոհով անցած,
Երկրագնդով մէկ տարածուած,
Անկախութեան նորից ելած
Ազգիդ մասին՝ հայեր կոչուած:

Իշխանաւոր ով հարուստ մարդ:
Այսօր դու կաս, վաղը՝ «չկաս»:
Ի՞նչ է միտքդ, ա՛յ «խելահաս»:
Թէ թագաւոր կ'ուզես լինել
Ու կրկնել պատմութիւնը հին,
Անհնար է, բացառւում է՝
Երկրագունդ չես դու տակաւին,
Որ «պտտուես» ու ետ բերես
Անցեալները՝ հին, ցաւագին:

Ո՞վ դուք ագահ հարուստ մարդիկ:
Յարստութեամբ խեղուած մարդիկ:
Բախտի բերմամբ, թէ «պատահմամբ»,
Որ դիզել էք հարստութիւն,
Միեւնոյնն է, չեմ կասկածում.
«Չունէք հոգու խաղաղութիւն»,
Էլ չեմ ասում՝ երջանկութիւն
Երջանիկ էք գուցէ պահով
«Ձեր աշխարհում» անապահով:
Ապրել կեանքում երջանկութեամբ
Կարելի է զուտ բարութեամբ.
Բարի եղէք, այնպէս վարուէք,
Մարդկանց սրտում «կրակ վառէք»,
Այնպէս արէք, հանց համարէք
Թումանեանն է ելել, մաղթում,
Ձեր լաւ գործն է փառքով օրհնում:
Եւ յիշեցէք, ինչ էլ անէք,
Յայրենիքի հողում արէք,
Որ ձեր գործը մնայ յաւերժ,
Ձեր անունն էլ յիշուի անվերջ:

## ԳՐԱԿԱՆ ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐ

*Ծածկանունը մականուն է, որով հանդէս են գալիս գրողները, պատմաբանները, արուեստագէտները, պետական, ռազմական ու յեղափոխական գործիչները եւ ուրիշներ:*

*Ծածկանունը, կեղծանունը եւ գրական անունը նորաթուխ բառեր են: Մեր հները այս բոլորի փոխարէն օգտագործել են մականունը, որ նշանակում է մարդուն տրուած վերադիր անուն, փոխ անուն:*

*Մեր ժողովրդի անուանադիր Հայկը եղել է քաջ նետաձիգ, որի պատճառով էլ ստացել է Աղեղնաւոր Հայկ մականունը: Մականուն են ունեցել նաեւ Հայկի սերունդները: Նրանցից Անուշաւանը կոչուել է Սօսանուէր: Որովհետեւ նուիրուած է եղել Արմաւիրի Սօսեաց անտառին:*

*Եթէ հնագոյն ժամանակներից մինչեւ 18րդ դարի վերջը եղած հայկական մականունները փորձենք համակարգել, ապա կը ստանանք հետեւեալ բնութագիրը:*

*17րդ դարի պատմիչ Առաքելը ստացել է Դաւրիժեցի մականունը, որովհետեւ ծնուել է Դաւրէժ (Թաւրիզ) քաղաքում: Հայ ժողովրդի մեծանուն զաւակներից է 18րդ դարի բանաստեղծ երգիչ Սայաթ-Նովան, երգչի անունը Յարութիւն է, իսկ Սայաթ-Նովան մականուն է, որ որոշ բանաստեղծների կարծիքով նշանակում է երգի արքայ կամ երգի որսկան:*

*Ըստ Վահագն Դաւթեանի տեսակէտի, Սայաթը աշուղի ազգանուան Սայադեանի կրճատուած, մի փոքր հնչիւնափոխուած ձեւն է, իսկ Նովան հնդեւրոպական նախալեզուի բառ է, որ նշանակում է նոր:*

*Մեծանուն վիպասան Րաֆֆին (Յակոբ Միրզայի Մելիք-Յակոբեան, 1835-1888) չի ստուգաբանել իր գրական անունը:*

*Ինչ է նշանակում Րաֆֆի, ինչո՞ւ գրողն այդպիսի կեղծանուն ընտրել: Րաֆֆի, անունը կարելի է ստուգաբանել երկու կերպ: Առաջին Րաֆֆին րաբբի բառի հնչիւնափոխուած ձեւն է: Րաբի բառի արմատը սեմական է եւ նախնական իմաստով նշանակել է մեծ, մեծաւոր, տէր: Յետագայում բառի իմաստն աւելի է ընդարձակուել, այն է րաբբի նշանակում է վարդապետ, ուսուցիչ, առաջնորդ: Րաբի բառից են հայերէնի մէջ հագարամեայ արմատներ ձգած րաբբուն, րաբունապետ, րաբունի բառերը, որոնք ունեն նոյն իմաստը, ինչ րաբբին:*

*Երկրորդ: Յայտնի է, որ 1852-56 թուականներին ապագայ վիպասանը սովորել է Թիֆլիսի ռուսական Գիմնազիայում: Այդ տարիներին Րաֆֆի անունով իտալացի մի երգիչ հիւրախաղերի է եկել Թիֆլիս: Հնարաւոր է որ Յակոբ Մելիք-Յակոբեանը, հրապուրուել է այդ երգչով եւ վերցրել նրա անունը:*

*Նար-Դոս գրական անունն ունի այսպիսի պատմութիւնը:*

*Նարդոսը մեղրատու ծաղիկ է, որ աճում է նաեւ Անդրկովկասում: Մի անգամ վիպասանի բրդավաճառ հայրը հիւանդանում է: Տատի խորհրդով գորգավաճառը նարդոսից պատրաստած հիւթ է խմում եւ ապաքինւում: Դա զարմանցնում է փոքր Միքայէլ Յովհաննիսեանին, եւ նա սկսում է արտակարգ սէր տածել նարդոս ծաղկի հանդէպ: Հետագայում այդ ծաղկի անունը նա դարձնում է իր գրական անունը:*

*Նա երազում էր ունենալ երկու տղայ մէկի անունը դնել Նար, միւսինը Դոս: Բայց գրողը ունեցաւ միայն մի տղայ (երգիչ, ժողովրդական արտիստ, Նար Յովհաննիսեան) եւ նա այդ անունը ժառանգութիւն թողեց ընթերցողներին:*

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)
GLOABCAST SATELLITE
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողները հեռաձայնել՝
(626) 398-0506

# ՈՎՔԵՐ ԵՆ ԱՍՈՐԻՆԵՐԸ

*Շարունակուած էջ 16-էն*

*28-ը նշուող Շառան՝ նուիրուած քրիստոնէութեան համար նահատակուած Լուկայի ու նրա 4-ամեայ որդու՝ Սուրբ Կիւրիակոսի յիշատակին: Եւ տօնը սոսկ ծիսական արարողութիւն չէ: Այստեղ է, որ երեւում է ասորիների համախմբուելու, լեզուն, սովորոյթները, երգն ու պարը պահպանելու եւ սեփական դիմագծով սերունդ մեծացնելու նախանձախնդրութիւնը: Յատկանշական է, որ մինչեւ լուսաբաց տեւող ուրախութեանը միանում են այլ գիւղերից եւ նոյնիսկ արտասահմանից եկած ասորիներ, ովքեր յաջորդ օրուայ լուսաբացին նոյնպէս մասնակցում են համագիւղական մեծ մատաղին:*

*Արգնի համայնքից դիտողի մտապատկերում խոր տպաւորւում է 1824 թ. կառուցուած ս. Մարիամ Աստուածածին եկեղեցին, որի հսկայ 4 գերաններն, ասում են՝ գաղթողները Ուրմիայից են բերել՝ եզների լծած: Եկեղեցու բակում դրուած խաչքարը յուշում է 1915 թ. հայերի հետ միասին ասորիների տուած մեծ կորուստների մասին՝ 500-750 հազար զոհ, որի վերաբերեալ աշխարհը գրեթէ ոչինչ չգիտի:*

*Միջազգային ցեղասպանութեան մասնագէտ, այժմ Շիքակոյի համալսարանի դասախօս Անահիտ Խոսրոեւայի մեկնաբանութեամբ եւ եզակի կադրերով ու լուսանկարներով ֆիլմը երիցս փաստում է Մեծ եղեռնի ահաւոր սարսափները, որին կուլ գնացին միանգամից մի քանի ազգ՝ հայ, ասորի, եզդի, յոյն:*

*Ֆիլմի պատուէրն իրականացնող ժողստեղծագործութեան կենտրոնի ղեկավար Տիգրան Յակոբեանն ասում է, թէ 2009 թ. Մայիսին Թուրքիայի Դերսիմի շրջանից (Մնձուր լեռներ, Դերջանի գաւառ) վերադառնալուց յետոյ համոզուեց, որ պէտք է ողջ ձայնով խօսել ազգային փոքրամասնութիւնների մասին, որովհետեւ քաղաքական լուրջ հարց է, թէ երկիրն ինչպէս է վերաբերւում իր փոքրամասնութիւններին:*

*- Թուրքիայում մենք ունենք մահմեդականացած հայերի ստուար մի խաւ, եւ կայ իրեն զազալեւին կոչող հետաքրքիր մի ժողովուրդ, որի երգերը թէեւ դեռ կարօտ են ուսումնասիրութեան, բայց ակնյայտ է, որ հայկականի հետ սերւում են միեւնոյն արմատից: Ինքնութիւն հաստատելու շատ խնդիրներ ունենք, բայց դրանից առաջ պէտք է ցոյց տանք, թէ ինչ ենք անում այստեղ՝ մեր ազգային փոքրամասնութիւնների հարցերով:*

*Այսպիսով, ֆիլմից լիովին երեւում է նաեւ պետական վերաբերմունքը երկրում ապրող ազգային փոքրամասնութիւններին, որոնցից պետականութիւն չունեցող ժողովուրդները՝ ասորիները, եզդիներն ու քրդերը, արժանանում են յատուկ հոգածութեան: Այդ հոգածութեան անունը տուեալ դէպքում ջրագիծ է, երկյարկանի դպրոցների հիմնանորոգում ու գոյքով ապահովում, դասագրքերի տպագրութիւն, ազգային լեզուի ուսուցման չափանիշների հաստատում, ռադիոժամերի հեռարձակում, որով Հայաստանը առանձնանում է՝ սկսած դեռ խորհրդային ժամանակներից: Թէ ինչ ուշադրութիւն է դարձւում բարձրագոյն կրթութեանը, Հայաստանի ասորական ֆեդերացիայի նախագահ Իրինա Սադրադովա-Գասպարեանի խօսքից տեղեկանում ենք, որ հարցը լուծուած է ՀՀ ԱԺ եւ ԿԳ նախարարութեան մակարդակով, եւ որ Երեւանի պետական համալսարանի արեւելագիտական ֆակուլտետում անվճար սովորող ուսանողները զուգահեռաբար դասաւանդում են նաեւ ասորաբնակ գիւղերում: Ի դէպ, այդպիսի ուսանողների կը տեսնէք նաեւ ֆիլմում՝ ռադիոյով ասորական ժամը վարելիս: Ողջոյնի նախադասութիւնը հնչում է այսպէս. «Երեւան համզումելա, շլամ ալոխում» («Երեւանն է խօսում, բարեւ ձեզ»):*

*Այսպիսով, «ֆիլմ-ուսումնասիրութիւնը», կարելի է ասել, դիտակի տակ է առել գրեթէ ամէն ինչ եւ Հայաստանի ասորիների կեանքն ամփոփում է մշակութային անդրադարձով, որի կիզակէտում Մատենադարանում պահուող 36 ձեռագրերը, բերին Դուինի պատկերասրահը եւ քանդակագործ Վագգէն Իսակովի «Հանճարների պուրակն» են: Քանաքեռում ծնուած ու մեծացած աւեստագէտը խոր երախտիքով է խօսում իր ուսուցիչ Երուանդ Քոչարի, հին ընկերներ Մինաս Աւետիսեանի ու Յարութիւն Կալենցի մասին, ափսոսում, որ ասորի ժողովուրդը հնարաւորութիւն չունի հաղորդակցուելու իր պատմական անցեալի բուն դրսեւորումներին, եւ այդ իսկ պատճառով է, որ ինքը շատ այլ մեծերի հետ միասին (Աբովեան, Խաչատրեան, Տոլստոյ, Գորկի, Բելինսկի, Նալբանդեան, Ֆիրդուսի, Նարեկացի) նախ եւ առաջ քանդակել է յայտնի ասորիներին՝ Ագա, Աբգար Ե, Մար Աբաս Կատինա, Եփրեմ Ասորի, Շամիրամ, Իգնատոս, Յակոբ Մծբնացի...*

*Ֆիլմի երաժշտական ձեւաւորումը՝ հայ Վահան Արծրունու, ասորի Վիոլետ Սարգիզի եւ թուրք Ֆահիռ Աթաօղլուի ստեղծագործութիւններով, իւրօրինակ դրամատիզմ ու քնարականութիւն է հաղորդում ողջ պատումին, իսկ վերջակէտ դարձող ասորերէն «Աթուրայա» (նշանակում է՝ ասորի) երգը պայծառ արցունք է քամում իւրաքանչիւր դիտողի սրտից, որովհետեւ մեղեդային հանդերձանքով է ցոյց տալիս իր դիմագծի համար պայքարող հնագոյն ժողովրդի նկարագիրը, նրա սրտի խռովքն ու անհանգստութիւնը:*

*Բայց ֆիլմի ռեժիսորը լուծում է տուել նաեւ այդ հարցին: Կինոնկարի վերջին կադրում Միջագետքի քարտէզն է եւ հակառակ ուղղութեամբ շարժուող քարաւանը:*

*Գեղարուեստական ընդհանրացումն, այսպիսով, աւելի քան խօսուն է. կը գա օրը, երբ ճանապարհներն այլեւս չեն թախծի գնացողների հետեւից: Ճանապարհները սպասում են վերադարձին:*

Հայ news am

# ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

*Շարունակուած էջ 15-էն*

մութեան եւ անցեալի հետ, պաշտպանութեան տակ առնել հայերի գերեզմանոցները, ուսումնասիրել իրադարձութիւնները եւ լոյս սփռել պատմական անցքերի վրա

*(տե՛ս «Թուրք մտաւորականները Ստամբուլում կազմակերպել են «Այլեւս երբէք» կարգախօսով հանրահաւաք», «Նոր Հայաստան», Երեքշ. Ապրիլ 27, 2010, էջ 4):*

*Այսօր համայն հայութիւնը պահանջում է Հայերի Ցեղասպանութեան միջազգային եւ Թուրքիայի կողմից ճանաչումն ու բոլոր ուժերը կենտրոնացրել է այդ ուղղութեամբ: Բայց ներկայումս դրանց զուգահեռ ուրիշ ծրագրեր չեն երեւում: Այդ հարցի դրական լուծումից յետոյ ի՞նչ է լինելու յաջորդ քայլը: Արդեօ՞ք յստակ ծրագիր կայ կամ աշխատո՞ւմ են այդ ուղղութեամբ Հայաստանում ու սփիւռքում: Այս հարցը մտորումների տեղիք է տալիս: Կարծում ենք, որ ժամանակն է, նոյնիսկ ուշացել ենք այդ հարցում: Անհրաժեշտ է յատուկ յանձնախումբ ստեղծել Հայաստանի ու սփիւռքի ցեղասպանագէտներից, դիւանագէտներից, իրաւաբաններից ու յստակ ծրագիր մշակել հայութեան անելիք յետագայ քայլերի մասին...: Այս կապակցութեամբ սփոփիչ է եւ ողջունում ենք Հայերի ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ Ազգային ժողովում յանձնախումբ ստեղծելու որոշումը պատշաճ կերպով նշելու այդ: Միգուցէ սա հենց այն յանձնախու՞մբն է, որը կը զբաղուի նաեւ վերոյիշեալ հարցերով...:*

*Ցանկացած երկրի որոշիչ ուժը ժողովուրդն է եւ յատկապէս նրա երիտասարդութիւնը: Հայաստանի ղեկավարութիւնը Հայաստանին դիմակայող դժուարութիւնները յաղթահարելու եւ Հայաստանը հզօրացնելու համար առաջին հերթին պէտք է.*

*1. Բարելաւի ժողովրդի տնտեսական վիճակը: Աշխատանքով ապահովի ոչ միայն հարազատներին, խնամի-ծանօթ-բարեկամներին ու ընկերներին, այլ՝ ողջ ժողովրդին, որպէսզի նպաստի նրա աճին, կասեցնի արտագաղթը, որն առանց այն էլ թոյլ Հայաստանին անելանելի վիճակի մէջ է դնում: Հայաստանի նման փոքր երկրի համար ուժեղ բանակ ունենալը յարաբերական հասկացութիւն է եւ դեռ բաւարար պայման չէ խաղաղութեան համար, երբ սահմանամերձ գիւղերում միայն տարեցներ են ապրում, իսկ Արցախի բնակչութեան նշանակալի մասը Հայաստանում է: Երկիրը ինչպիսի հզօր բանակ էլ ունենայ, նրա պաշտպանութեան որոշիչ ուժը ժողովուրդն է՝ որքան շատ ժողովուրդ ունենայ, այնքան հզօր կը լինի այն...:*

*2. Երկրի ներսում կայունութիւն ստեղծի, ազատելով բոլոր քաղբանտարկեալներին, որոնք իրենց կեանքի գնով պաշտպանեցին հայրենիքը, իսկ այսօր շինծու մեղադրանքներով գտնւում են բանտերում, քանի որ պահանջեցին կեղծիքներով ընտրուած նախագահի հրաժարականը:*

*3. Երկխօսութեան գնա ընդդիմութեան հետ եւ ժողովրդավարութիւն ստեղծի:*

*4. Թուրք ժողովրդին սիրաշահելու ճկուն քաղաքականութիւն վարի, որը կը նպաստի Հայաստանի ու Թուրքիայի միջեւ բարիդրացիական յարաբերութիւնների ստեղծման:*

*5. Վերջ տայ երկիրը թալանելուն եւ առանց այն էլ ժողովրդի դժուար կեանքը աւելի դժուարացնելուն. ճգնաժամային պայմաններում թանկացման հետեւանքով ժողովրդի դրութիւնն աւելի վատթարացաւ:*

*6. Քաղաքական որոշումներ կայացնելիս չենթարկուի գերտերութիւնների ճնշումներին՝ իր խարխուլ աթոռն ամուր պահելու համար. եթէ չի կարողանում ղեկավարել երկիրը, թող այն յանձնի ղեկավարել կարող ուժին:*

*7. Սփիւռքին սիրաշահելու համար լուրջ, զգոյշ ու խոհեմ դիւանագիտութիւն վարի, յատկապէս Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիայի, Հայաստանի սահմանների եւ Հայերի ցեղասպանութեան հետ կապուած հարցերում հաշուի առնի սփիւռքի կարծիքն ու չպարտադրի իր կամքը նրան՝ նկատի ունենալով համայն հայութեան շահերը:*

*Այս մտորումներով Մեծ եղեռնի յուշարձանի պանթէոնում խոնարհւում ենք մեր անմեղ նահատակների եւ Արցախի ազատագրման մարտերում ընկած հերոսների յիշատակների առջեւ ու պատգամում նոր սերնդին՝ աննկուն կամքի ուժով շարունակել արդար պայքարը հանուն հայ ժողովրդի գոյատեւման:*


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 for USA**

*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**

*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ---------------------------------------**

**Address: ---------------------------------------**

**City: --------- State:--------- Zip Code:------**

**Country: -------------**

**Tel :------------------------ Fax : -------------------------**

## ՀԵՏԱՔՐՔԻՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ

*Շարունակուած էջ 5-էն*

*իր բազմաթիւ ելոյթների ընթացքին՝ աշխարհի բոլոր անկիւններում:*

*Հայաստանի Հիւպատոսութեան կազմակերպած մտերմիկ երեկոյին պաստառի վրայ ցուցադրուեց Մարտի 5ին Քարաքասում կատարուած համերգի տեսագրութիւնը:*

*Խանդավառ մթնոլորտում աւարտուեց իր տեսակի մէջ իւրօրինակ ու բացառիկ երեկոն:*

*Շնորհակալութիւն հաճելի երեկոյի համար:*

## ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԸ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

*Շարունակուած էջ 7-էն*

*ցան տնօրէն՝ Պրն. Յովսէփ Ինճէճիկեանի գնահատանքի խօսքերով:*

*Սոյն ձեռնարկի ընթացքին ցուցադրուած էին վարժարանի աշակերտներուն արուեստի գործերը: Երրորդէն մինչեւ 8րդ կարգի աշակերտները անխտիր, գծագրութիւններով մասնակցեցան ցուցահանդէսին, կրկին անգամ նիւթ ունենալով Հայկական Ցեղասպանութիւնը կամ Հայ ժողովուրդի վերականգնումը: Ներկաները հրճուանքով դիտեցին մանուկներու ձեռքով պատրաստուած արուեստի գործերը:*

*Ապրիլ 25ին վարժարանիս երգչախումբը մասնակցեցաւ Հայ Աւետարանական Միութեան կողմէ կազմակերպուած 95ամեակի միացեալ պաշտամունքին, որ տեղի ունեցաւ Հոլիվուտի Միացեալ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ մէջ:*

*Մեր փոքրիկները իրենց անմեղ ձայները բարձրացնելով առ Աստուած, կրկին անգամ իրենց հաւատքը ամրացուցին որպէս հայ Քրիստոնեաներ:*

*Վերջին ձեռնարկը տեղի ունեցաւ Մայիս 5ին: Հայոց Պատմութեան մրցոյթ մըն էր, որուն մասնակցեցան 5րդ-8րդ կարգերու աշակերտներէն 27 հոգի՝ 9 խումբերով: Անոնք սորված էին սկիզբէն մինչեւ ներկայ օրերը ընդգրկող հայոց պատմութեան 250 հարցում-պատասխաններ: Մրցոյթը տեւեց աւելի քան մէկ ժամ, մասնակիցները փաստեցին որ լաւ կը ճանչնան իրենց ազգի անցեալի պատմութիւնը, հետեւաբար պատրաստ են կերտելու անոր ապագան:*

*Այսպէս, Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանը Ապրիլը անցուց՝ իր Հայ Վարժարանի առաքելութիւնը կատարած ըլլալու գոհունակութեամբ:*

## ՆՍՄՄ ԿԸ ՄԵԾԱՐԷ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿԸ

*Շարունակուած էջ 8-էն*

*RELIEF SERVICES միջազգային բարեսիրական կազմակերպութեան Լիբանանի բաժանմունքի տնօրէնուհի եւ այս հանգամանքով ապահոված է նպաստներ Լիբանանահայ աւելի քան երկու տասնեակ հաստատութիւններու:*

*- Նշանակուած է միեւնոյն կազմկերպութեան միջազգային խորհրդական եւ այս հանգամանքով Կիւմրիի մէջ հիմնադրած է Caritas Armenia-ն Հայկական Գարիթասը:*

*- Եղած է տնօրէնուհի Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան Գէորգ Հարպոյեան երկրորդական Վարժարանի:*

*- Եղած է Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկի խորհրդատու մարմնի ատենապետուհի:*

*- Ընտրուած է Հ.Կ.Բ.Մ.-ի Արուեստասիրացի Ատենապետուհի:*

*- Եղած է Հ.Մ.Մ.ի Տիկնանցի վարչականուհի:*

*- Աւագ վեթերան անդամ է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան:*

*- Ամենապատիւ Ներսէս-Պետրոս Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարքին կողմէ պարգեւատրուած է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:*

**ԱԶԱՏՈՒՀԻ ՍԻՄՈՆԵԱՆ**

*Տիկին Ազատուհի Սիմոնեան 1960-էն ի վեր անգլերէն լեզուի եւ գրականութեան մնայուն դասախօս եղած է Լիբանանեան Ամերիկեան համալսարանին մէջ:*

*Տիկին Սիմոնեան գործօն ներկայութիւն է ազգային կեանքին մէջ, դասախօսութիւններով եւ հրապարակային զրոյցներով, ինչպէս նաեւ մամուլին մէջ հրատարակած յօդուածներով մանկավարժական, հոգեբանական, կրթական, ընտանեկան, մշակութային ու դաստիարակչական նիւթերու շուրջ: Ան անգլերէն լեզուով եւս կը գրէ յօդուածներ, եւ կը ներկայացնէ ուսումնասիրութիւններ հայ կնոջ արժէքներու մասին, Լիբանանեան Ամերիկեան համալսարանի Կանանց Ինստիտուտի «Al-Raida» պարբերաթերթին մէջ:*

*Տիկին Սիմոնեան հեղինակ է երկու հատորներու՝ «Հայ Կինը, Ընտանիքը, Երիտասարդը» (1988) եւ «Երիտասարդութիւն եւ Դաստիարակութիւն» (1995):*

*1999-2006 թուականներուն տիկին Սիմոնեան մաս կազմած է Ճինիշեան հաստատութեան խորհրդատու մարմնին՝ որպէս ատենադպիր: Այժմ Գարակէօզեան հիմնարկութեան Լիբանանի խորհըրդատու մարմնին անդամ է:*

*Վերջերս պարգեւատրուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառի կողմէ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:*

**ՍՕՆԱ ՆԱՇԵԱՆ**

*Կեդրոնական Բարձրագոյն վարժարանի մէջ պաշտօնավարած է 50 տարի:*

*Նախակրթարանէն սկսելով, մինչեւ երկրորդական բաժին դասաւանդած է գիտութիւն, աշխարհագրութիւն, կենսաբանութիւն, անգլերէն լեզու, ֆրանսերէն լեզու, երգ, ձեռագործ, մարզանք:*

*Պաշտօններ՝ քարտուղարութիւն եւ դասատու ուսուցիչ, Նախակրթարանի պատասխանատու եւ տնօրէնութիւն:*

**www.massisweekly.com**
**Updated every Friday**

## «ՋԱՆ ԹԱՒՐԻԶ»

*Շարունակուած էջ 6-էն*

*պէս իրար հանդիպելու եւ վերյիշելու երջանիկ մանկութիւնը, երիտասարդութիւնը եւ ազգային աւանդական ջերմ մտերմութիւնը եւ իհարկէ Թաւրիզի աւանդական քուֆթան:*

*Բացակայում էր նոր սերունդը որը ոչ մի պատկերացում չունէր Թաւրիզից: Տարէց տարի այդ ուրախ ու շէնշող մթնոլորտը ազգային ուրախ երգն ու երաժշտութիւնը, խանդավառ պարերն ու ու ջերմ ընդունելութիւնը գրաւեց առաւել երիտասարդների եւ ընտանեկան խմբերի:*

*Հաճելի էր նաեւ երեխաների ներկայութիւնը: Ներկաների մէջ էին չորս ընտանիք իրենց չորս սերունդներով (հայրեր, զաւակներ եւ թոռներ ու ծոռներ), որոնց մեծ ու մեծ պապերը եւս իրար հետ մտերիմներ եւ ազգականներ են եղել Փայտակարանի Սարդու գիւղում. եւ ահաւասիկ այս վերահանդիպումը կրկին ջերմացրեց պապ ու պապերի երբեմնի մտերմութիւնը եւ գծեց գերդաստանների 5-6 սերունդների «կենաց ծառը», փոխանցելով գալիք սերունդներին ազգային ոգի, որպէսզի նրանք եւս միասնական ջանքերով պահեն ու պահպանեն մեր պապերի վարքն ու բարքը, նրանց անկոտրում ոգին ու կուռ հայրենասիրութիւնը՝ մի ազգ, մի մշակոյթ եւ մի Հայրենիք լոզունգով:*

*Չմոռանալէ յիշելու այն սիրելի Թաւրիզեցիներին, որոնք ամեն տարի հասցնում են ներկայ գտնուել այդ յիշարժան ջերմ երեկոյթին: Ամերիկայի տարբեր նահանգներից, Եւրոպայից, Հայրենիքից որոնց հանդիպումը յաճելի անակնկալներ են մեր բոլորի համար: Ուշագրաւ էր Գլենդելի քաղաքապետի (mayor) պրն. Ֆրանք Քուենթերոյի ներկայութիւնը եւ յատկապէս նրա մտերմիկ ու անմիջական մասնակցութիւնը հայկական պարերին: Նա այդ երեկոյթի մասին հեռուստատեսութեամբ քաղաքապետարանի հերթական ժողովի բացման խօսքի մէջ արտայայտուեց որպէս շատ հետաքրքիր ձեռնարկ, որը ոչ մի փոքրամասնութեան կողմից նախադէպը չունեցող աշխատանք համարելով, արժեւորեց 160 տարուայ Թաւրիզ քաղաքի հայերի մշակոյթն ու անցեալը ներկայացնող մօտ 10 հազար (իր տպաւորութեամբ) լուսանկարների գոյութիւնն ու ցուցադրումը: Դա մի «Սուպեր Ֆանտաստիկ» ձեռնարկ էր ասել է նա:*

*Ուրախ երգ ու պարերին առընթեր եղան անվճար վիճակախաղեր, նուիրատուների կողմից յատկացուած թանկարժէք հինգ նուէրներով, նաեւ ուշագրաւ ու գնահատելի էր խոշոր նուիրատուութիւնը Ոմն Թաւրիզեցուց: Եղաւ հաշուետուութիւն նախկին չորս տարիների նիւթական հասոյթի վերաբերեալ:*

*Առաջին եւ երկրորդ տարիների 2006-2007 թուերի օգուտը ամբողջութեամբ յանձնուել է Արարատ մասնաճիւղի վարչութեան: 2008 եւ 2009 թուականներին տեղի ունեցած ձեռնարկներից գոյացել է 27000 դոլար, որը կազմում է առ այս ունեցած ընդհանուր դրամագլուխը:*

*Կային վաճառքի դրուած պատմական նմանահանութեամբ վերատպագրուած գրքեր Թաւրիզին վերաբերող եւ ամերիկեան նամակադրոշմներ (stamps) Ատրպատականի պատմական վանքերի եւ Թաւրիզի Ս. Սարգիս եկեղեցու պատկերներով: Գինիներ «Ջան Թաւրիզ» վերատառութեամբ:*

*Ընթրիքից յետոյ մատուցուեց թէյ եւ սուրճ: Ժողովուրդը վայելելով 5-րդ տարեդարձի տորտն ու մատուցուած թէյն ու սուրճը չմոռանալով կատարել ազգային միասնական Քոչարին հեռացան առաւօտեան ժամը 2-ին իրենց հետ տանելով վառ յուշեր տարուայ գարնանամուտին նորից վերահանդիպման ոգեշնչումով:*

*Ներկայ մը*

## ԼԵԶՈՒԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 13-էն*

*յին մշակոյթը եւ լեզուն:*

*Այսպիսով, ՀՀ կառավարութեան լեզուաքաղաքական յեղաշրջման նախաձեռնութիւնը գալիս է եւս մէկ անգամ ապացուցելու, որ Հայաստանի Հանրապետութիւնը դեռեւս շատ եւ շատ հեռու է կայացած պետութիւն, առաւել եւս հայկական պետութիւն լինելուց, ըստ այդմ էլ, հայութեան կենսական շահերը շարունակում են մնալ անպաշտպան եւ վտանգուած վիճակում: Սոյն նախաձեռնութիւնը, ինչպէս դրան նախորդած «ֆուտբոլային դիւանագիտութիւնը», անփառունակ վախճան կ'ունենայ: Յոյսով ենք, իրենց դիրքորոշումն այս օրինագծի վերաբերեալ շատ չեն ուշացնի յայտնել նաեւ Հայ Առաքելական եկեղեցին, ՀՀ ԱԱ Լեզուի, Գրականութեան, Պատմութեան եւ միւս ինստիտուտները, Երեւանի պետական համալսարանն ու միւս բուհերը, Հայաստանի գրողների միութիւնը, հայ մտաւորականութիւնն առհասարակ, ինչպէս նաեւ Սփիւռքը: ՀՀ իշխանութիւնները ստիպուած կը լինեն հնչեցնելու նահանջի փողը, զուցէ թէ քաւութեան նոխազ դարձնելով որեւէ բարձրաստիճան պաշտօնեայի: Սակայն, պէտք է հասկանանք, որ խնդիրը ոչ թէ առանձին պաշտօնեան է, այլ ՀՀ քաղաքական վերնախաւը, որի օտարացումը հայ ժողովրդից ծնել է մեզանում մի նոր ենթաէթնոս՝ իր ուրոյն արժեհամակարգով, որտեղ ազգային հիմնարար արժէքները՝ Հայաստան հայրենիքի գաղափարը, ազգային լեզուն եւ մշակոյթը, հայկական պետականութիւնը, ազգային արժանապատուութիւնը տեղ չունեն եւ աւելորդ բեռ են համարւում:*

*Այսօր ազգային իշխանութեան ձեւաւորումը դարձել է օրախնդիր, հրատապ պահանջ, այլապէս այսուհետ հայ ժողովուրդը զբաղուած է լինելու իր իսկ պետական մարմինների՝ իր իսկ շահերի դէմ հերթական գրոհներն անընդհատ հետ մղելով, այդպիսով վատնելով հայութեան սահմանափակ դիմադրական ռեսուրսները: Եւ դա այն ժամանակ, երբ արտաքին վտանգներն արձանագրում են միայն աճի միտում:*

## Հայաստան - Ուզբեկստան՝ 3:1

«Հանդիպման արդիւնքից, ինքնին, գոհ եմ, բայց թիմի խաղի որակից՝ ոչ: Առաջին խաղակէսում ֆուտբոլիստները լաւ խաղ ցուցադրեցին, սակայն երկրորդում համարեա կանգնեցին, շատ քիչ էին տեղաշարժւում: Կարծում եմ, պատճառը հաշուի մէջ եղած մեծ տարբերութիւնն էր» - այսպէս մեկնաբանեց Հայաստան - Ուզբեկստան ընկերական խաղը Հայաստանի ընտրանու գլխաւոր մարզիչ Վարդան Մինասեանը:

Գնահատելով մրցակցի խաղը, նա ասաց, որ Ուզբեկստանի ընտրանին ընդհանուր առմամբ բարձր վարկանիշ ունեցող հաւաքական է, սակայն այս անգամ այն իր հնարաւորութիւններից ցածր հանդէս եկաւ:

Ուզբեկստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Վադիմ Աբրամովի կարծիքով իր թիմը շատ անվստահ սկսեց խաղը, բայց յետոյ ցոյց տուեց այնպիսի խաղ, ինչի ընդունակ է. «Հայաստանի հաւաքականը խաղասկզբում շատ մարտական էր տրամադրուած, եւ դա արագ արդիւնք տուեց: Մեր համար հանդիպումը շատ անյաջող սկսուեց, արագ գոլեր բաց թողեցինք, բացի այդ, մնացինք 10 հոգով: Ընդմիջմանը ստիպուած բացատրական աշխատանք տարանք ֆուտբոլիստների հետ: Արդիւնքում երկրորդ խաղակէսում թիմն աւելի վստահ ֆուտբոլ ցուցադրեց, բայց խաղը փրկել այդպէս էլ չյաջողուեց»:

Հիւրերի մարզիչը միաժամանակ ինչ-որ տեղ դժգոհ էր մրցավարութիւնից՝ գտնելով, որ գլխաւոր մրցավարը սխալմամբ նշանակեց 11 մ. հարուածը եւ խաղադաշտից հեռացրեց իր թիմի պաշտպանին (ի դէպ, վերջին յոյսի խախտման համար կարմիր քարտ ստացաւ հիւրերի հայազգի պաշտպան Արտեոմ Փիլիպոսեանը): «Ես հասկացայ, որ Թբիլիսին աւելի մօտ է գտնւում Երեւանին, քան՝ Տաշքենտը» - վերջում հումորով ասաց Վադիմ Աբրամովը (նա նկատի ունէր այն, որ խաղի գլխաւոր մրցավարը Վրաստանից էր):

Յաւելենք, որ Հայաստան - Ուզբեկստան ընկերական հանդիպումն աւարտուեց մեր ֆուտբոլիստների յաղթանակով՝ 3:1: Արդէն առաջին խաղակէսում Հենրիխ Մխիթարեանը բացեց հաշիւը, իսկ Էդգար Մանուչարեանը կրկնապատկեց ու եռապատկեց այն: Հիւրերին միայն ընդմիջումից յետոյ յաջողուեց խփել պատասխան միակ գոլ:

## Մահացել է Հայաստանի Ծանրամարտի Տղամարդկանց Հաւաքականի Գլխաւոր Մարզիչ Աշոտ Մխիթարեանը



Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց հաւաքականի գլխաւոր մարզիչ, ՀՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակաւոր գործիչ Աշոտ Մխիթարեանը յանկարծամահ է եղել:

Մայիսի 23-ի գիշերը՝ «Զուարթնոց» օդանաւակայանում Վալենսիայում կայացած Եւրոպայի պատանիների առաջնութիւնից վերադարձող մեր հաւաքականին դիմաւորելիս 51-ամեայ մասնագէտը սրտի կաթուած է ստացել եւ տեղում մահացել:

Աշոտ Մխիթարեանը Հայաստանի ծանրամարտի ազգային հաւաքականը գլխաւորում էր 2006 թուականից: Նրա սաները Պեկինի օլիմպիական խաղերից Հայաստան են վերադարձել երեք բրոնզէ մեդալներով: Գիւմրեցի մարզիչի ղեկավարութեամբ հայ ծանրորդները տասնեակ յաղթանակներ են տօնել նաեւ աշխարհի եւ Եւրոպայի առաջնութիւններում:

## Ծանրամարտի Հայաստանի Պատանեկան Հաւաքականը Նուաճեց 5 Ոսկէ, 6 Արծաթէ եւ 4 Բրոնզէ Մեդալ

Հայաստանի տղաների եւ աղջիկների պատանեկան հաւաքականները Վալենսիայից վերադարձան թիմային պայքարում նուաճած արծաթէ մեդալով:

Մայիսի 22-ին 94 կգ քաշային Համլետ Պօղոսեանը պոկում վարժութիւնում 145 կգ արդիւնքով նուաճեց Եւրոպայի առաջնութեան փոքր արծաթէ մեդալ, իսկ երեկոյեան այս տարիքային խմբի գերծանր՝ +94 կգ քաշային կարգում հանդէս եկած Գոռ Մինասեանն ու Միշա Մուրադեանը Հայաստանի հաւաքականի հաշուարկին բերեցին եւս հինգ մեդալ: Գոռը երկրորդն էր պոկում (155 կգ,), հրում (185 կգ) վարժութիւններում եւ երկամարտում (340 կգ), իսկ Միշան պատուոյ պատուանդանի երրորդ աստիճան բարձրացաւ հրումում՝ 181 կգ, եւ երկամարտում՝ 321 կգ:

Այսպիսով, մեր պատանի ծանրորդները Իսպանիայում ընդհանուր առմամբ նուաճեցին 5 ոսկէ, 6 արծաթէ եւ 4 բրոնզէ մեդալ եւ այս հաշուարկով թիմային պայքարում գրաւեցին երկրորդ տեղը՝ իրենցից առաջ թողնելով միայն Ռուսաստանին: Տղաների պայքարում վաստակած միաւորներով նոյնպէս Հայաստանի տղաները երկրորդն են՝ 555 միաւորով: Աղջիկների մէջ, շնորհիւ միակ մասնակից Իզաբելա Եայլեանի, Հայաստանը մեդալների քանակով հանգրուանեց 5-րդ տեղում՝ 2 արծաթ եւ 1 բրոնզ, իսկ միաւորներով՝ 73, ճանաչուեց 12-րդը:

## Հայաստանը 100-րդն է

Ֆուտբոլի Հայաստանի հաւաքականը 100-րդ տեղում է ՖԻՖԱ-ի կողմից հրապարակուած ազգային թիմերի դասակարգման աղիւսակում: Նախորդ ամսուայ համեմատ Հայաստանի ընտրանին մէկ աստիճանով նահանջ է ապրել:

Աղիւսակը վստահ գլխաւորում է Բրազիլիայի հաւաքականը: Ապա յաջորդում են Իսպանիան, Պորտուգալիան, Հոլանդիան, Իտալիան, Գերմանիան, Արգենտինան, Անգլիան եւ Խորվաթիան: Վերջինս միակ թիմն է տասնեակից, որը չի մասնակցելու աշխարհի առաջնութեան եզրափակիչ մրցաշարին:

Հայաստանի առաջիկայ մրցակիցներից առաւել բարձր տեղ զբաղեցնում է Ռուսաստանի ընտրանին, որը 11-րդն է աղիւսակում: Սլովակիան գտնւում է 34-րդ, Իռլանդիան 41-րդ, Մակեդոնիան 61-րդ, Անդորրան՝ 201-րդ հորիզոնականներում:

## «Հատիս»-ը Կը Մասնակցի Ռուսաստանի Բաց Առաջնութեանը

Երեւանի «Հատիս» կանանց բասկետբոլային ակումբը դրական պատասխան է տուել Ռուսաստանի բասկետբոլի ֆեդերացիայի եւ այդ երկրի բասկետբոլային սուպերլիգայի պաշտօնական հրաւէրին՝ մասնակցելու Ռուսաստանի 2010-2011թթ. բաց առաջնութեանը:

Առաջնութիւնը կայանալու է 2010 թ. Հոկտեմբերից 2011 թ. Մայիսը: Նշենք, որ առաջնութեանը մասնակցելու են նաեւ Ռուսաստանի 5 առաջատար ակումբները, Ուկրաինայի, Լիտվայի, Լատվիայի եւ Լեհաստանի չեմպիոն թիմերը: Հայաստանը ներկայացնող ակումբը մասնակցելու է նաեւ Եւրոգաւաթի խաղարկութեանը, որը մեկնարկելու է Սեպտեմբերին: Դրանից առաջ թիմը նաեւ համալրելու է շարքերը:





# ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ $ 400
Long Weekend-ների համար՝ $ 500
Մէկ շաբաթուայ համար՝ $ 675
Մէկ ամսուայ համար՝ $ 1450

# ՔԱՋ ՆԱԶԱՐ

ՌՈՒՊԻԿ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30

Կլէնտէյլի 280-րդ կայանից